

21339

21340

21341

891.99.09

7-16

891.93.03

2-16

✓

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԴԱՆԱՆՑ

ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

«Մի աշխարհ, կեղեքուած ներքին խռովու-
թիւններով, փրկութիւն կ'գտնի միայն իւրա-
քանջիւրի և բոլորի սիրոյ մէջ դէպի իրանց
մերձաւորները»:

Մէն-ՅՁԻ, ՉԻՆԱՅԻ ԽՄԱՏԱՍԻՐ. ԷՋ 20.



(132)

ՄՈՍԿՈՒՍ.

Տ Պ Ա Ր Ա Ն Բ. Բ Ա Ր Խ Ո Ռ Դ Ա Ր Ե Ա Ն Ի.
1901.

4795

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 1 Юля 1900 года.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Тип. Х. Бархударянъ, Москва, Срѣтенка, Мясной пер., д. Баринава.

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Ց Տ Օ Ն Ի Ա Ռ Ի Թ Ո Վ:

I.

Ամէն տարի, Բարեկենդանի հինգշաբթի օրը, հայաստանեայց եկեղեցին իւր ժողովրդի հետ միասին կատարում է Վարդանանց յայտնի տօնը, նրանց զլիաւորներին էլ մի-մի յիշում իւր սքանչելի «Նորահրաշ» շարականի մէջ: Բայց գործողութիւնը, մեղանից ամբողջ դարերով հեռու լինելով շատերս մոռացել ենք այն տօնի ներքին իմաստը ու բովանդակութիւնը: Այս պատճառով ես իմ ընթերցողներին առաջարկում եմ ուշադրութեամբ հետեւել ներկայ «Յիշողութիւններին»:

Աշխարհիս մէջ ամէն բան, թէ շնչաւոր և թէ անշունչ, ենթարկուած է բնութեան ազդեցութեան, իսկ բնութեան ազդեցութիւնը այնպէս է, որ ինչ էլ կայ կամ գոյութիւն ունի, չի կարող անփոփոխ մնալ իւր տեղում: Ուրեմն, մարդը ևս, բնութեան արդիւնքներից մինը լինելով, կարող չէ բաժանուել նրա օրէնքներից: Ինչպէս ամեն մի անհատ, որքան էլ հսկայական կազմուած ունենար ու հոգեկան աշխոյժ, այնու ամենայնիւ, մի օրոշ հասակի հաս-

նելով, սկսում է ինքը իւր մէջ լուծուել, ապա և կեանքից զրկուել, — այսպէս էլ ամբողջ ազգը, մի յայտնի պատմական շրջան կատարելով, իւր տեղը ուրիշին է տալիս, որ քաղաքական մտքով նշանակում է նոյնպէս կեանքից զրկուել, այսինքն մեռնել¹⁾: Շատ էլ հեռու չգնալով օրինակներից, ասենք, որ անհամար Մօղօլ-Թաթարական ցեղերը, ամբողջ երկու հարիւր տարի հեղեղելով Ռուսաստան և ստրկութեան մէջ պահելով նրան, այժմ հասարակ դոնապաններ են դառել նոյն Ռուսների տներում, շատերն էլ, մի կտոր Ղաղանի սապոն ձեռին, դռնէ-դուռը քաշ են դալիս օրական հաց ծարելու!

Այսպէս էլ ներկայումս տիրապետող ցեղերը իրանց մեծութիւնը չպիտի անանցական համարեն, որովհետեւ երկրագունտը յարատեւ փոփոխուելով, մի քանի դարերից յետոյ կարող է նոյն տիրապետողներին Թաթարների բախտը ընծայել:

Բայց մարդկային անհաստատ կացութեան մասին խօսելով, մենք մեր նախերգանքը կամենում էինք վերաբերել յատուկ այն երկու ազգերին, որոնք Վարդանանց օրերով դեռ ևս համաշխարհային դեր էին խաղում, իսկ այսօր, տեսէք, թէ ինչ ողորմելի վիճակի են հասել! Դոքա Պարսիկներն են ու Յոյները:

¹⁾ Не помѣшаетъ замѣтить, что въ психическомъ отношеніи наши дѣти до нѣкоторой степени повторяютъ исторію всего человѣчества, и въ этомъ смыслѣ можно говорить о „дѣтствѣ народовъ“, о ихъ „возумжалости и дряхлости“; это не простая аналогія, но указаніе на параллелизмъ развитія. — *Տես ուս. Թարգ.* „Исторія Культуры“ Гельвальда, էջ 148.

Իրաւի. երբեմն ահագին և լայնածաւալ Պարսից Թագաւորութիւնը, որ իւր ներքին կազմութեամբ աշխարհների փառքն էր վայելում, այժմ փոխուել է մի սահմանափակ նահանգ, այն էլ լետարգիական քնի մէջ թմրած, — և հանդիստ է, որովհետեւ թմրածին ձեռը չին տալիս: Նոյն բանը ասելի է և Յոյների մասին, որոնք մտաւորական և ֆիզիկական ոյժերով սպառուած և փոքրիկ տարածութեան մէջ առանձնացած, փոքր մնաց, որ մեր օրերում Մուհամմետի «Էէշ Բարճաղը»¹⁾ ճնշել նրանց, ինչպէս ուրուրը ճընշում է հաւի ճուտին իւր ճանկերի մէջ! Ահա այս երկու ազգերիցն էր կախուած մեր հայրենիքի բախտը հինգերորդ դարում, որով մտադիր եմ հարեանցի ղեաղուել այստեղ:

II.

Զորորդ դարի սկզբում, քրիստոնէութիւնը տարածուելով հայերի և Յոյների մէջ, երկուսն էլ մօտեցան միմեանց հետ հաւատով, թէեւ այդ հաւատակցութիւնը, ինչպէս կ'տեսնենք, շուտով քաղաքական կերպարանք ստացաւ: Յայտնի բան է, որ Պարսիկները հաշտ աչքով չէին կարող նայել այդ իրողութեան վերայ: Այնուհետեւ հայաստանը դարձաւ մի երկպառակութեան ասպարէզ, ուր Պարսիկները ու Յոյները փոփոխական բախտով աշխատում էին տակն ու վրայ անել նրա բարօրութիւնը:

Հայերն էլ չկարողանալով ընդդիմանալ երկու հզօր հակառակորդներին, անդադար միջնորդներ էին ու-

¹⁾ «Հինգ մատը»:

ղարկում հաշտութեան նպատակով, բայց խեղճերը զնալով ու գալով «Աննայից դէպի Կայիափա և Կայիափայից դէպի Սննա» ոչինչ չշահեցին, մինչև որ երկու դատաւորները «բաժանեցին զհանդերձս յիւրեանս և ՚ի վերայ պատմութեանի իմոյ վիճակս արկանէին»:

Սյոսորինակ հայաստանը բաժանուեց երկուսի մէջ 395 թ.: Արևելեան մասը հասաւ Պարսիկներին, Արևմտեանը — Յոյներին, բայց հայ թագաւորներով որպէս վասսալ կամ հարկատու: Սյո կատարեալ աչքակապութիւն էր, որովհետև Յոյները մի քանի տարուց յետոյ իրանց բաժնից հեռացրին հայ թագաւորին և այն բոլորը, ինչ որ հայոցն էր կամ հայերէն էր: Սյո զեռ. բաւական չէ. երբ որ Վարդանանք 451 թ. պատգամաւորներ ուղարկեցին Բիւզանդիոնից օգնութիւն խնդրելու Պարսիկների դէմ, Յոյները, ինչպէս բուն հերոսացի զիւլումաններ, այնքան տարանքերան նրանց, մինչև որ Սաւրայրի պատերազմը վերջացաւ, իսկ պատգամաւորները դարդակ ձեռքով յետ դարձան այնտեղից: Անտարակոյս, այդտեղ կրօնական պատճառներ էլ կային. յունական խելքը, որ առաջնորդում այնքան կուլտուրական էր և ստեղծագործող, այժմ խմորուել էր բնազանցական մտածողութիւններով ու դաւանարանական նրբութիւններով, որոնց շնորհիւ անդադար ծագում էին նորանոր հայեացքներ Քրիստոսի բնութեան ու առհասարակ քրիստոնէական ուղղափառութեան մասին: Զարմանալի չէ որ այդպիսի հոգեկան ցնցումների միջոցին մարդիկ, ինչպէս և ամբողջ ազգեր, բաժանուէին միմեանցից առանձին յատկութիւնների զանազանու-

թեամբ և այնուհետև սկսվում էր նրանց մէջ ծածուկ կամ յայտնի դժուութիւն: Մի այդպիսի դժուութիւն արդէն զգացվում էր Հինգերորդ դարի հայերի և Յոյների մէջ յատուկ այն պատճառով, որ հայերը սովորաբար չեն սիրում ուրիշի տուար բռնած դնալ և ուրիշի խելքով գործել:

Սյո հանգամանքը թէև մեզ մեծամեծ վնասներ է հասցրել մեր պատմական ընթացքում, բայց այնուամենայնիւ աւելի լաւ է մոռնալ և ուրիշի անկախութիւնը, քան թէ ամէնի հետ համաձայնել և ամէն մէկի ետեւից քաշ գալ:

III.

Պարսիկները ևս հետեցին Յոյների օրինակին: Նոքա էլ վաղուց մտածում էին հայաստանի միւս մասը միացնել իրանց աշխարհի հետ ոչ միայն տարածութեամբ, այլև կրօնով, իսկ այս այն ժամանակուայ մտքով, դժբախտաբար, և մեր ժամանակի մտքով,—նշանակում էր հայութեան անունը ջնջել և ոչնչացնել: Նոցա առաջին ցանկութիւնը, ինչպէս վերը նկատեցինք, կատարուեց. աւելի դժուար էր երկրորդը իրագործել: Սյո նպատակին հասնելու համար Պարսից կառավարութիւնը գործ էր դնում զանազան միջոցներ:

Նա երբեմն շողջորթ սիրելութեամբ առատ պարգէներ էր տալիս հայոց նախարարներին և երբ այսպիսի բաներով չէր աջողվում նրանց զլուխը իւզել, խստութեամբ պատժում էր նրանց և շղթայակապ բանտերի մէջ ձգում: Սյոպիսի քաղաքականութեան

Հետեւելով, յայտ է որ Պարսիկները ոչ մի հասկացողութիւն չունէին հպատակի իրաւունքի մասին: Մի աշխարհի հպատակ լինել դեռ չի նշանակում, որ այդ հպատակը պարտաւոր է մոռանալ իւր կրօնը, իւր լեզուն ու ազգութիւնը: Հայերը, ինչպէս հպատակ, ոչ թէ Պարսիկներին պիտի ծառայէին, այլ միայն Պարսկաստանին, այսինքն նրա քաղաքական ու անտեսական շահերին, որ, այս դէպքում, նոյնպէս նրանց սեպհական շահերն էին: Բայց տիրապետողն մի այսպիսի առնչութիւն դէպի տիրապետեալը շատ և շատ հեռու էր պարսկական իրաւասութիւնից:

Այնուհետեւ Պարսից կառավարութիւնը սկսեց Պարսիկ մարզպաններ (կուսակալ) ուղարկել Հայաստան, պատուիրելով նրանց որ մօտենան, ընտելանան նախարարների հետ ու խնամութիւն անեն և պէսպէս խնջողքներով նրանց սիրտը գրաւեն: Բայց մարզպանները, Հայաստան գալով, շրջապատում էին իրանց աւաղակաբարդ և աշխարհակեր Պարսիկ ծառայողներով, որոնց աչքում ոսկին ու արծաթը աւելի նշանակութիւն ունէր, քան թէ օրէնքը ու պարտականութիւնը: Բայցի սրանից մարզպանները լաւ հայերին հեռացնում էին գործից և նրանց տեղը անպիտան հայերին տալիս. իսկ սրանք Պարսից բարերարութիւնների փոխարէն, երեսանց ընդունում էին դրանց կրօնը, երկրպագութիւն էին տալիս կրակին ու ատրուշաններին և ապա, դուրս գալով այնտեղից, ապականում էին սրբավայրը¹⁾: Մի կողմից էլ մարզպանները աշխատում էին կաթողիկոսներին ան-

1) «Ղազար Փարպեցի»:

ուանարկել ժողովրդի աչքում, նրանց իրաւունքները սահմանափակելով և տէրութեան առաջ և յանցաւոր հրատարակելով: Շատ կարելի է, որ կաթողիկոսները, ինչպէս և ամեն մահկանացու մարդ, մի փոքր պակաս կամ մի փոքր աւելի գործէին իրանց իրաւունքից, բայց խօ բանը այդ մի փոքր աւելի, մի փոքր պակաս է, այլ որ ոյժի օրէնքը կրկնվում է ամէն անգամ, երբ տէր զայլը ուզում է նիւքեւ մեղաւոր կամ անմեղ գառին!

Մենք հասկանում ենք, որ Պարսիկները կաթողիկոսական հաստատութեան մէջ կարող էին տեսնել մի անսպառ ոյժ, մի անխորտակելի յենակէտ, Լուսաւորչու աջով խարսխած, ուրեմն և նուիրական հայոց ժողովրդի համար, բայց այդ «ոյժը» և այդ «յենակէտը» ապստամբողական դիրք չէ բռնած դէպի որ և լինի տէրութիւն: Հետեւաբար հայոց կաթողիկոսները, պատասպարելով իրանց հօտը այլադաւան յարձակումներից, միշտ տուել են «Ձկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ», այս պատճառով նրանք պատուի պիտի արժանանային և ոչ ոտնաձգութեան, որով Պարսիկ մարզպանները անգաղար հարուածում էին Մայր-Աթոռը:

Ահա այդպիսի մարդիկ էին, որ, բռնակալութեան մէջ սնուած, գալիս էին մեր թշուառ աշխարհը բարեկարգելու: Բայց ով է տեսած, որ բռնակալութիւնը կարողանայ աշխարհս բարեկարգել?!

Յայտնի բան է, հացկատակ հայերն էլ, որոնց մասին վերը յիշեցինք, ոչ խղճի խայթոյ զգալով իրանց սրտի մէջ, ոչ պատկառանք աշխարհի առաջ, նպաստում էին Պարսիկների ձեռնարկութիւններին: Դրժ-

բախտաբար ոչ միայն հինգերորդ դարում, այլ և մեր օրերում անպակաս են այդ տեսակ հայեր, մանաւանդ Թիւրքիայում, որոնց անդացիները սովորաբար ասում են «Քրիստոսվաճառ»: Նրանք, տաճիկ փաշաների և կամ Եւրոպայի խոհանոցները աւարտած, մի ուրիշ ահրեստ չցիտեն, քան թէ ելե՛սն արթա՛նք ծախել ազգը և օտարի փշտանքը ժողովել! Ասածիս ճշմարտութիւնը կարող է հաստատել Զնդոյեանների ջոկատը, որ մեր հօտի քօսոտ ոչխարն է: Բայց դրանք մանր-մունր տանու զոդեր են համեմատութեամբ այն երկու հայերի հետ, որոնց քաջագործութիւնը մի փոքր յետոյ կ'տեսնենք:

IV.

Որովհետեւ յաջորդ դուլներում անգաղար պիտի յիշուի Զրադաշտի կրօնը, մեր ընթերցողներին հարկաւոր ենք համարում գոնէ մի վերահայեաց ծանօթութիւն տալ նրա մասին:

Կրօնը, ինչ տեսակ էլ լինի, սկսած ամենակոպիտ մտապատկերներից մինչև նրանց վերացական հասկացողութիւնը, ցոյց է տալիս այս և այն ազգի կուլտուրական կեանքի աստիճանները: Զրադաշտի ուսումը, ինչպէս աւանդուած է «Զենդ-Աւեստի» գրքի մէջ, ցոյց է տալիս, որ նրան դաւանող Պարսից ազգը հասած է եղել զարգացած քաղաքական սկզբունքների:

Ահա այդ ուսման համառօտ նկարագիրը:

Զրադաշտ (Զարադուշտրա) մոզը կամ մարգարէն, ասում են, որ մօտաբար կացել է Քրիստոսից 1060

տարի առաջ: Զրադաշտի ասելով, աշխարհիս մէջ երկու սկզբունք կայ, — բարւոյ և չարի, որոնք գտանվում են մշտական թշնամութեան մէջ միմեանց հետ: Բարի աստուածը, Արամազդ (Ահուրամազդա), «արարիչ երկնքի և երկրի», վերջ ի վերջոյ պիտի յաղթի չար աստուած հարամանին (Անրօմանիշա, Ահրամանիշ) և իսպառ ոչնչացնի նրա իշխանութիւնը: Զրադաշտի գրուածներում կան շատ կէտեր, որ բնականաբար, հակառակ են մեր այժմեան բարոյական հասկացողութիւններին, բայց այնպիսի կէտեր էլ կան, որ համաձայն են քրիստոնէական վարդապետութեան: — Զօր. Զրադաշտը հաւատում է հօգու անմահութեան: Նա ասում է. «Մարդս, մահից յետոյ ենթարկվում է դատաստանի, ուր Ահուրամազդան արդարութեամբ կշռում է նրա արած գործերը, թէ բարի, թէ չար և մի-մի նշանակում իւր մատեանի մէջ: Նայած դատաստանական քննութեան, հոգուն ցոյց են տալիս դրախտը և դժոխքը: Բարի գործերի վերջնական յաղթանակից յետոյ, բոլոր մարմինները յարութիւն պիտի առնեն, բարեպաշտները կամ աստուածապաշտները, ահեղ դատաստանից յետոյ, գնում են Ահուրամազդայի անվախճան թաղաւորութիւնը, իսկ ամբարիշտները ոչնչանում են իրանց հարաման չար աստուածի հետ միասին»:

Պարսիկները զխաւորաբար պաշտում էին արեգակը որպէս կեանքի և կենդանութեան պատճառ և, որովհետեւ արեգակի նոյնանիւթը երկրի վերայ կրակն է, նրանք շինում էին կրակարաններ կամ ատրուշաններ, ուր օր ու զիշեր կրակ էր վառվում:

Բացի սրանից Պարսիկները ունէին բազմաթիւ ուրիշ աստուածներ, սրբեր ու հրեշտակներ պէսպէս յատկութիւններով:

Սյստեղ հետաքրքրական է մէջ բերել մի աղօթք, որ մենք, համարեա, բառ առ բառ քաղում ենք Կորշի «Исторія всеобщей литературы» գրքից, որով կարելի է ծանօթանալ այն բազմանուն աստուածների հետ:—Ահա.

«Փառք և գոհութիւն տէր Ահուրամազդային, որ բոլոր ստեղծուածների արարիչն է: Գոհութիւն և փառաբանութիւն Միհր աստուածին, որ կրում է ձեռքին սրանչելի զէնք,—ամենափայլունը բոլոր զէնքերից: Աղօթում ենք արդար Սրօաշին, որ սուսերամերկ կանգնած է դեերի զլիւին: Ամենասուրբ մաղթանքով դիմում ենք Երկնակամարին, անեղը և անսահման ժամանակին և Օղին, որոնք վերեւից ներգործում են մարդկային կեանքի վերայ: Աղօթք ենք մատուցանում Ահուրամազդայի սրբուհի և զեղեցկուհի դուստրին. աղօթում ենք ուղիղ հաւատով Մադդէզանց օրէնքին¹⁾, որ հակառակ է չար դեերի բանսարկութեան: Փառք և պատիւ Ամշտսպանդնեւրին,—մեր վեց սուրբերին, բարեպաշտ Զրադաշտին, արգարադատ Աթար-Խսիդին, չօրդաթին և Ամուրդատին»:

Աստուածները ու սուրբերը միշտ պէտք է հսկեն իրանց հաւատացողի քաջառողջութեան և աջողու-

¹⁾ Հայերէն ձեւը «Մադդէզանց օրէնք» կամ «Դենի-Մադդէզն» եւրոպական գրականութեան մէջ ասվում է «Маздаизм».

թեան վերայ, քանի որ նա կենդանի է, իսկ մահից յետոյ նա արժանանում է անմահութեան և երանաւէտ հանգստութեան:

Ինչպէս յայտնի է, հին ժամանակներում կրօնը զբաղւած էր ոչ միայն հոգեւոր կեանքի գնացքը յարմարելու, այլ և քաղաքական կենցաղավարութեան միակ օրէնստուն էր համարվում: Սյսպէս էր և Զրադաշտի ուսումը: Քաղաքական սարք ու կարգին վերաբերեալ կէտերից շատերը բաց թողնելով, հարեւանցի այստեղ նշանակենք միայն ամուսնութեան մասին, որ անասելի զոռանք էր պատճառում հինգերորդ դարի չայերին: Զրադաշտը ամուսնական կենակցութեան մէջ թոյլ է տալիս միանգամայն խառնազնաց վարք. նրա համար արիւնակցութեան կամ արիւնառութեան աստիճանները նշանակութիւն չունին: Բաւական է ասել, որ Զրադաշտի օրէնքով ամենամօտ արիւնակիցները կարող էին միասին անկողին մտնել և սերունդ ունենալ, որպէս, որդին իւր հարազատ մօր հետ, եղբայրը իւր հարազատ քրոջ հետ, հայրը իւր աղջկայ և թուռները իրանց պապերի հետ: Սյգտեսակ արիւնախառնութեամբ Պարսիկները մտածում էին ազգային անհատների թիւը աւելացնելու, այն ինչ Ֆիդիօլօգիան և էմբրիօլօգիան (սաղմնաութեան զիտութիւնը) ամենեւին հակառակն են վկայում¹⁾: Նոյն նպատակով Պարսիկների

¹⁾ Սյս մտքով Զինացւոց ամուսնական դրութիւնը պարսկականի և շատ ազգերի հակապատկերն է ներկայացնում: Նրանց օրէնքով արգելւած է ամուսնութիւնը ծնողների, պապերի, հօրեղբայրների, մօրաքոյրերի և առհասարակ ազգակիցների մէջ մինչև հինգերորդ ցեղը արական և իգական

մէջ գոյութիւն ունէր հարեմական կեանքը, այսինքն բազմակնութիւն, որի մասին մի ուրիշ տեղ էլ ունինք խօսելու:

Այսպիսի ամուսնական պայմաններ, անկասկած, մեր բարոյական զգայմունքը պիտի շօշափեն, բայց պէտք է իմանալ, որ բարոյականութիւնը, մարդկային գործ լինելով և ոչ բնութեան, ունի միայն տեղական նշանակութիւն. նա այնպէս անհաստատ է ու փոփոխական, ինչպէս էլ փոփոխական է մեր կեանքը: Եթէ բոլոր ժամանակների և ազգերի բարոյական հասկացողութիւնը մի որոշ չափով չափէինք, հարկաւոր կ'լինէր ենթադրել, որ այն բոլոր ժամանակները ու ազգերը անբարոյական են եղել: Այդ ակներեւ թիւրիմացութիւն է:

Զրադաշտի ուսումը, թէև չունի Բուդդիզմի¹⁾ լայնածաւալ և թաթաղուն սիրոյ հոսանքը, այնուամենայնիւ նա զուրկ չէ մարդասիրական կարեկցութիւնից և միանգամայն ընդդէմ է կրօնական մարդատեցութեան:

Պատմական իրողութիւնների վերայ հիմնուելով, մենք պիտի ասենք, որ Պարսիկները առհասարակ

Ճիւղերով, Գուգէ այս խտութիւնը ամուսնութեան մէջ պատճառ է եղել այն յայտնի ֆիզիկական գերազանցութեան ու սեռական պտղաւէտութեան, որ տուել է Զինաստանին բազմամիլիոն սերունդ:

1) «Բուդդան, ներշնչուած սիրով, թափանցում է աշխարհի մի ծայրից մինչև միւսը. նա թափանցում է ամբողջ տիեզերքը վերևից, ցածից, շուրջանակի և ամեն կողմից և նրա սէրն է անչափելի, խորագգաց և խաղաղական»: Տես ռուս. թարգ. «Рись - Дэвидсь», էջ 79:

ներողամիտ են իղել զէպի օտարի կրօնը²⁾: Միայն վերջին ժամանակներում, հինգերորդ դարում սկսուեց կրօնական հալածանք, որովհետև մոզերը, որ առաջ լուի հոգևորականի պաշտօն էին կատարում, այժմ տէրութեան մէջ ստացել էին գերակշիռ և սահմանադրող ոյժ: Նետաքրքրական է ծանօթանալ Նիլվալդի կարծիքի հետ այդ հանգամանքի մասին, որ դնում ենք այստեղ ռուսերէն թարգմանութիւնից: (Исторія культуры Гелльвальда, էջ 388):

„Отправление священническихъ обязанностей находилось, какъ уже замѣчено, въ рукахъ особой касты, маговъ.“

„Далѣе религіозной стороны, жречество въ царствѣ Ахеменидовъ никогда не пользовалось вліяніемъ. Отсюда его терпимость по отношенію къ иновѣрцамъ. Ученіе Зороастра, основатель котораго въ своихъ „гаеасахъ“ рѣшительно объявляетъ себя „невоинственнымъ чело-вѣкомъ“, первоначально было совершенно чуждо стремленію къ насильственному распространенію.“

„Такое стремленіе мы находимъ впервые при Сассанидахъ, когда духовенство стало опредѣляющимъ госу-“

2) Հայերը, և հեթանոսական դարերում, և Քրիստոսից յետոյ, շարունակ ապրելով Պարսկաստանում, համեմատաբար ապահով կեանք են վարել և ոչ էլ ճնշուել նրա իշխանական ձեռի բռնութիւնից: Մինչև անգամ Իսլամի շրջանում, երբ Արաբները, Փանատիկոսութեան լապտերը ձեռին՝ թէ մարդ, թէ տուն կրակի էին մատնում, Պարսիկները, պէտք է ասել, չմասնակցեցին նրանց ծայրայեղութիւններին և այսօր էլ բարեկամ են մնացել հայերին, Բայց մեր ժամանակները չար ներշնչումների ժամանակ է և ամեն կողմից թակարդներ են դրած...: Տայ Աստուած, որ Շահերի սիրտը չգայթակղուի այդ թակարդներից:

дарственнымъ факторомъ, однако, и здѣсь дѣло не зашло дальше попытокъ насильственного обращенія Армянъ, бывшихъ главною жертвою такой пропаганды“.

Հեղինակի ասածի ապացոյցը, եթէ միայն հորկաւոր են ապացոյցներ, կարող են լինել Իսպանիայի ինկուիզիցիայի սարսափները, այլ և մահամեղան ազգաբնակչութեան Ֆանատիկոսութիւնը, ուր ուլեմները խօսքը օրէնք է, իսկ փաղիշահներ—լոկ կանոն: Բայց մեզ թուում է, որ հալածանքների օրինակը քրիստոնեաներն են տուել Պարսիկներին, երբ Նոբա, սկսած Երուսաղէմից և Միջերկրական աշխարհներից մինչև Նոյն իսկ հոռվմ, խարոյկներ ու կախաղաններ էին շարում,—առաջ այլադաւան կռապաշտների համար և յետոյ Նոյնպէս այլադաւան քրիստոնեաների համար, որոնց այսօր էլ Հետեում են շատ «հայեր» և կամ հայրանման որսորդներ Աստուծոյ առաջև: Այսպէս է լինում միշտ, երբ հոգեորականութիւնը ստանում է գերակշռութիւն աշխարհական իշխանութեան վերայ:

Իսկ ինչ որ վերաբերում է Հայոց հոգեորականներին, պէտք է ասել, որ նրանց առհասարակ օտար է եղել «պրօպագանդայի ծրագիրը», որ այնքան նորաճաշակ փորձութիւններ է պատճառել օտարադաւաններին: Այսպէս է Հայաստանեայց խաղաղասէր եկեղեցու ոգին: Հարկաւոր չէ մի առանձին նշանակութիւն տալ այն հանգամանքին, որ մեր հոգեորականներն էլ քրիստոնէութեան առաջին դարերում, խիստ կրօնական ուղղութեան շնորհիւ, ցանկանում էին ինքնուրոյն դիրք բռնել աշխարհական իշխանութիւնից, որ այնքան էլ չաջողուեց նրանց: Այնու-

հետև հոգեոր հոգիւնները, քանի որ հաւատը կենդանի էր գործով և դեռ ևս աղատ շահասիրական մանուածներէից, մեր դժբախտ պատմական ընթացքում անբաժան մասնակցել են ազգի դառնութեան բաժակին և շատ անգամ էլ հասարակ ղեկուորի պէս կռուել խղճի աղատութեան համար:

Սակայն մենք մոռացած կ'լինէինք մեր պարտքը, որ մեր վերայ դնում է տպագրական խօսքի սպասաւորութիւնը, եթէ չյիշենք այստեղ և այն անարժան հոգեորականների խումբը, որոնք իրանց տգիտութեամբ խաւար կիտելով ժողովրդի զլխին, թունաւորում են նրա հոգեոր կեանքը և դայթակղութեան առիթ լինում դէպի օտարը: Դոքա մոռանում են Քրիստոսի «փշեպ պսակը», որ իրանց պսակն էլ պիտի լինէր և առանց մշակելու ու գործելու գիտեն միայն ազահաբար ժողովել և ազահաբար վայելել!

Մենք այդ տեսակ հոգեորականների բարքը կշտամբելով, կամենում ենք միայն պատսպարել Հայաստանեայց եկեղեցին օտարների զրպարտութիւններից, որոնք աղաւաղուած են համարում նրան: Ասում ենք, եթէ կան այդպիսի աղաւաղումներ, դրանք միայն Հայոց եկեղեցուն չեն վերապրելի, այլ և բոլոր եկեղեցիներին: Ոչ ոքի համար զաղանիք չէ, որ քրիստոնէութիւնը, որպէս և Քրիստոսի ուսումը, շատ ազգերից ու եկեղեցիներից, և մանաւանդ եւրոպական մարդկութիւնից, այնքան արմատական փոփոխութիւններ են կրել, որ համարեա թէ անկարելի է ճանաչել նրա նախատիպը: Բաղմաթիւ «Տիեզերական ժողովները» աւետարանական կենդանի խօսքը ձուլեցին մեռած անօթների մէջ, որոնք այնուհետև հին

լեզուների քերականական ձևերի պէս մնացին անհիւթ ու անշարժ: Այն էլ աւելացնենք, որ այդ «ժողովները» և «աղաւաղումները» զլխաւորաբար եւրոպական հողի վերայ են ծագել: Այս պատճառով մենք «հրաժարմբ» ենք տսում այն մտքին, որ հայոց եկեղեցին պատուաստուի մի ուրիշ եկեղեցու հիմքի վերայ, ինչքան էլ այդ ուրիշ եկեղեցին զրուատէր իրան գերադրական ածականներով:

V.

Հալածանքի ախտը, եթէ մի անգամ ընկել է մարդուս զլուխը, բարակացաւի պէս շարունակվում է անդադար, մինչև որ մի որոշ վախճանի հասնի: Այդ որոշ վախճանի համար արդէն պատրաստ էին բոլոր նիւթերը, որ Պարսիկները ամէն կողմից սկսեն ռմբակոծել հայերին: Վերջին շարժառիթը այս էր.

Սիւնեաց իշխանը, Վասակ, ունէր մի զուտոր, որին կնութեան առաւ մի ուրիշ փոքրիկ իշխան, Վարադ վաղան անունով: Յայտնի է, որ իշխանուհիներին սովորաբար մարդու են տալիս նոյնպէս իշխանադներին, որ նրանց «աղնիւ արիւնը» չխառնուի հասարակ մահկանացուի արիւնի հետ և որ հարստութիւնը, ինչպէս աստուածների պարգև, սիրնդէ սերունդ միմեանց ձեռն անցնի: Բայց հէնց այդ աստուածների պարգևը շատ անգամ փոխվում է նոյն աստուածների պատիժ, ինչպէս և ներկայ դէպքում: Հաւանական է հնէմադրել, որ անփորձ օրիորդը, դռնուելով ծնողների բռնութեան տակ, երբ մարդս ստիպուած է լինում հանապաղ կեղծաւորել և ծածկել իւր զգայմունքը, — ուղէր-չուղէր պիտի գնար Վարադվաղա-

նին, թէև նրան չսիրէր: Բայց երբ որ փոխադարձութիւն չկայ ամուսնութեան մէջ, ոչ մի հարստութիւն, մի, երկու, երեք միլիօն, ոչ էլ ճոխ տիտղոսներ — լուսափայլ, վսեմափայլ, ամենափայլ... չեն կարող բախտաւորութիւն բերել թշուառ զոյգին: Ես կարծում եմ, որ այն ողորմելի զուտորը որքան արտասունք պիտի թափած լինի գիշերներով, երբ լիալուսինը խորհրդաւոր լոյս է սփռում Վասակի արքայական պալատի վերայ, իսկ նա խոր հառաչանքով միայն անէծք էր ուղարկում երկնքին, որ աշխարհ էր ծնուել!

Մի ժողովրդական երգի մէջ հայ աղջիկը, խոր կսկծալով, և մինչև անգամ տատի հանգիստը չնստիւով, բողոքում է այդպիսի պսակի դէմ, ասելով. —

«Արեւ ընկաւ մեր պատին, —
Արքայութիւն իմ տատին.
Հոգիդ դատուի, այ տատի!
Ինձ խի տուիր կոնատին?»

Այս հաշուի պսակն է, և հէնց այստեղ է սկսվում այն, որ ասում ենք ընդանեկան դրամա, ընդանեկան պրագմէտի¹⁾:

1) Շատ անգամ պսակը այսպէս ևս է լինում: աղջկայ հայրը ու մայրը հաւանում են փեսային, իսկ փեսայի հայրը ու մայրը — աղջկան, — և ահա սկսվում է խնամախօսութիւն: Ճշմարիտ, կարծես թէ պսակուողները իրանք ծնողներն են! Ես հասկանում եմ, որ ծնողների սիրտը չի կարող չմասնակցել մի այդպիսի նշանաւոր գործողութեան, որպիսի հարազատների ամուսնութիւնն է, բայց պիտի մասնակցեն միայն բարի խրատներով և ոչ բռնութեամբ: Առհասարակ պէտք է ասել, որ ամուսնական ձախողու-

Այդ թշուառ պսակի պատմութիւնը այսպէս է.

Վարազվաղանը և նրա կինը սաստիկ առում էին միմեանց. Վասակ, որ զօրաւոր և ազդեցիկ մարդ էր, տեսնելով իւր հարազատի անտանելի դրութիւնը, միջոցներ էր որոնում սպանել նրան և երբ որ այս բանը չյաջողուէր, առաւ դուրս քշեց Վարազվաղին հայոց աշխարհից և այսպէս իւր աղ- ջկաց վըէժը հանեց: Վարազվաղանն էլ, չհամարձակ- ուելով ընդդիմանալ իւր աներին, փախաւ գնաց Պարսկաստան և ընդունեց նրանց հաւատը, որ ա- վում է Զրադաշտական: Ապա նա ներկայացաւ մեծ հազարապետ Միհրնէրսէհին և դրդեց նրան Զրա- ղաշտի կրօնը բռնութեամբ մտցնել հայերի մէջ: Վարազվաղանը մտածում էր, որ սրանով երկու աջո- ղութեան առիթ կունենայ, երկու նպատակի կ'հասնի, այսինքն եթէ հայերը ընդունեն, այն ժամանակ նա պատիւ ու պարգև կ'ստանայ թագաւորից, իսկ թէ ընդդիմանան,—տնով տեղով կ'կորչեն. գուցէ նրանց հետ էլ կորչի իւր ռիսերիմ թշնամին Վասակ: Վա- սակն էլ տեսնելով, որ իւր հակառակորդը պիտի փառաւորուի Պարսից աշխարհում և կարող էր իրան ֆնասել, ինքը էլ ընդունեց նոյն կրօնը. ուրեմն մէկը խեղաւ, միւսը յիմարացաւ, այսինքն երկուսն էլ միասին թուրքացան այժմեան մտքով: Այնուհե- տե երկուսն էլ, միմեանց հետ մրցելով և միմեանց

թիւնները մեր սօցիալական կեանքի բռնաւոր պայմաններիցն են առաջ գալիս, ուր պսակները գլխաւորաբար կատար- վում են հաշուի ու հարստութեան տեսակէտից և ոչ անձնուէր ու ինքնուրոյն սիրոյ թելադրութեամբ:

առաջը տալով, աշխատում էին «կարօն քաղնիս» պատրաստել իրանց ամենասիրելի հայրենիքի համար:

Ես հասկանում եմ, որ Վարազվաղանի ու Վասակի հաւատափոխութիւնը դեռ մասամբ կարող է ար- ղարանալ հոգեբանական ու տնտեսական վարիանտ- ներով, — այն, որ սեպհական է մարդկային թուլու- թեան, բայց ինչ անուն տանք նրանց վայրենի նեն- զութեան, որով դժոխքի պէս զինւորուեցին անմեղ հայրենիքի դէմ և հարազատների արիւնով ներկե- ցին հայրենի հողը!?

Աւստի քեզ, Վասակ, որ մի ժամանակ «այր խոր- հրդական և հանճարեղ»¹⁾ էիր հռչակուած հայոց աշխարհում, իսկ այսօր ինչ ես դու? Այսօր հայոց ազգը քո յիշատակին կարող է միայն ընծայել ներ- սէս Շնորհալու տապանազիրը.

«Երբե՞ն էի լոյս և այժմ է՞մ խաւար»:

Էհ, ընթերցող, ինչու թագցնեմ քեզանից, որ մեր ազգի բնաւորութեան մէջ, իրաւի, կայ մի վտան- զաւոր զանգուած, որ այս և այն դէպքում երեւան է զալիս: Հայը, որ հերսոտուեց,—Աստուած փրկէ, ազատէ! Ազգային մեծութիւն ու պատիւ, ազգային եկեղեցի ու սրբութիւն, որ նա անդադար կրկնում է, մի քօռ կոպէկի տեղ էլ չի գնալ, երբ նա մտքումը դրել է իւր ապօրէն ցանկութիւններին հասնելու: Հասկանալի կ'լինէր, եթէ նրա զայրոյթը վերաբերէր անձնական կամ ընտանեկան պատուին, կամ ազգա- յին զգացմունքի շօշափման կամ մի բարոյական

¹⁾ Վասակի մասին տես «Ամառնային Նամակներ», երես 93—104.

սկանդալի, բայց երբեմն մենք ամենաչնչին պատճառներից պատրաստ ենք նոր ճուտներ հանած թխտի պէս միմեանց երեսը ծուռտել!

Այս մտային օգտակար կ'լինէր մեզ մտաբերել Մէն-յզի Չինացի իմաստասէրի խրատը, որ ասում է. «Մի աշխարհ, կեղեքուած ներքին խռովութիւններով, փրկութիւն կ'գտնի միայն իւրաքանչիւրի և բոլորի սիրոյ մէջ դէպի իրանց մերձաւորները»:

Բարոյական կարգ և վերին մտառութիւններ խռովարարների համար անծանօթ բաներ են:

Ես, անկասկած, յանձն չեմ առնիլ «մեղքի կամ անմեղութեան» տուտը գտնելու, նախ, որ դա կ'ստանար տեղական նշանակութիւն և երկրորդ, որ այդպիսի դէպքում Կարապետը պիտի մեղադրէր Մարկոսին, Մարկոսն էլ սրան-նրան, մինչև որ «կուածադիկը» կ'տանէր կ'հասցնէր մեզ Տրապիզոն¹⁾: Այս պատճառով ես այստեղ բաւական եմ համարում կրկնել Կոնիովի «Կարապ, Ձու-իւ և Խեցի-Կիւն» առակի վերջաբանը.

«Ումն է մեղքը, ով անմեղ?—

Մեղ չէ դատել.—

Բայց հէնց այժմ էլ բեռն այնտեղ!»

Այդ իսկ բեռը, — ամենածանր բեռը, ընկած է և մեր Թեմական դպրոցների շէմքին, որը ոչ մի տիտան չի կարող տեղից ժաժ տալ: Արդեօք կ'սթափուի մեր բանականութիւնը ժամանակիս փորձանքներից, թէ էլի հակառակութեան «չխաբախել» կամ

¹⁾ Երախայութեան ժամանակ «Տրապիզոն» ասելով, հասկանում էինք «աշխարհի ծէրը»:

«Չախախտ», հաստ ու բարակ մանկով, միանգամայն պէտք է փաթաթեն մեզ օտով-գլխով, մինչև որ մէկը մեր այդ կապն էլ քանդի?!

Այս անպիտան սովորութիւնը, մենք, երեւի, ժառանգել ենք մեր աշխարհագրական պայմաններից, որ ահագին ազդեցութիւն են ունեցել ամէն ազգի պատմական կեանքի վերայ: Այնու ամենայնիւ մարդս, որպէս մտածող էակ, կարող էր կրթական ոյժերի միջոցով հարթել ու մեղմացնել բնութեան ձախորդութիւնները: Բայց ի՞նչ են մեր կրթական ոյժերը, երբ մեր կրթողների թիւն էլ մատերով կարելի է համարել: Այստեղ համարձակ կարող ենք կրկնել. «Բալլ—ճէ Էն Խըլեցեալ և Կալա—ընթըլեալ»:²⁾ Քանի որ երիտասարդ ենք, — այն կենսաբեր արեւաբացին, մենք մեր աչքի լոյսը տեսնում ենք ազգի բախտաւորութեան մէջ. մենք խօստանում ենք մեր բարոյական ու մտաւոր ոյժերով ծառայել նորածիլ գրականութեան. բայց, աւաղ! միայն Խոստանում ենք, այսինքն Խոստ—ճէ Էն: Յայտնի է, որ խօսքը շուտով է ասվում, բայց գործը շուտով չի կատարվում: Խոստանալու կամ խօսելու համար հարկաւոր է միայն անաշխատ լեզու, իսկ գործելու, — աշխատաւոր բազուկներ և մտախոհ գլուխ: Ահա այս վերջին յատկութիւնը, որ սովորաբար երիտասարդներին նշանաբանն է, քաղաքական կեանքում մեղանից փախուստ է տալիս, իսկ լի Խոստ մենք ընծայում ենք հայոց գրականութեան: Այն ինչ մեր տասնեակ աշխատաւորներին, յայտնի բան է, դժուար է մշակել զիտութեան լայնածաւալ և բազմաաեսակ ճիւղերը, որոնք և կաղմում են բուն մտքով գրականութիւն:

Սյս է պատճառը, որ մեր մտաւորական առուն երբէք չի հասնում դարնանային առատութեան, միշտ նուազ է ու ծանծաղ. ոչ խորութիւն ունի և ոչ էլ խոխոջուն պտոյտներ, այնպէս որ ամէն զրազէտ, ոտերը միայն մի փոքր քշտած, կարող է համարձակ միւս կողմը անցնել! Սյս այսպէս լինելով, մենք անկարող ենք համախմբել մեր ոյժերը հասարակաց օգտի համար: Սյո՛, մենք շատ փոքր բան ենք արել հասկացնելու չային այն կարեւոր ճշմարտութիւնը, որ մարդս միայն հասարակութեան մէջ պիտի որոնի իւր մարդկային արժանաւորութիւնը. որ նա հասարակութիւնից դուրս մի ուրիշ բան չէ, քան թէ լոկ շնչաւոր, քանի որ այդ շնչաւորի մէջ էլ զարգացած է ընկերական կեանք և համերաշխութիւն: Ահա տեսէք, թէ ի՞նչ վիճակի մէջ են մեր չորս-հինգ պարբերական թերթերը իրանց խմբագրներով ու աշխատակիցներով: Տեսէք, թէ այն մշակները ինչ ծանր աշխատանքով ու դառն քրտնքով են առաջ տանում իրանց գործը, այնու ամենայնիւ նրանք միշտ կարօտ են նիւթական նեցուկներին: Իսկ մեր սիւրբարիտները, միշտ փափկանալով և իւզալի սեղաններից վայելելով, մեծամտաբար աղաղակում են. «Էհ, ինչ մարդիկ են նրանք, ինչ է նրանց զրաճը»! Ինչ ասեմ՝ ձեզ, բարեկամներ, եթէ ձեր սիրտն էլ ցաւէր ազգի առաջադիմութեան մասին, դուք ևս կ'մասնակցէիք այն գեղեցիկ, բայց դժուար գործին և կ'զգայիք, որ այդ այնքան էլ հեշտ չէ, ինչպէս ծառից հասած պտուղներ քաղելը!

Սյո՛, մեր ազգի մէջ շատ փոքր է նշմարվում այն, որ ասվում է վերանորոգիչ հոսանք: Մեր ազգային

հաստատութիւններն էլ, որ այժմ բացառապէս վերաբերվում են «Հոգեւոր Դպրանոցներին», կրում են իրանց վերայ նոյն անշարժութեան նշանները: Զօր. Գէորգեան Ակադեմիան անցեալ տարին տօնախմբեց իւր հիմնադրութեան քսանհինգամեակը, բայց բացի սովորական ողորմութասերից ու կենաց թասերից, նա ընչով յաւերժացրեց այդ տօնախմբութիւնը? Արդեօք նա մտածեց, որ դպրոցը ինքը ուսուցիչը լինելով, պէտք է հոգայ այդ ուսուցչի ապագայի մասին, որ այսօր գրաւել է լուսաւոր ազգերի ուշադրութիւնը? Մեր խօսքը ուսուցչական Ֆօնդի մասին է: Մեզ կասեն, որ փող չկայ. պատասխանում ենք. փողը ինքը իրան չի գալիս, նրան պէտք է կանչել, փայփայել և այնպէս հիւրասիրել, որ էլ անից դուրս չփախչի: Սրա համար հարկաւոր է, որ այն տան վերայ լաւ տնտես լինի:—Մի այդպիսի տնտեսութիւն մենք չենք տեսնում հէնց ձեռնարանի հիմնադրութեան օրից: Սկզբումը ձեռնարանը համարեա պրօֆէսօրական ռոճիկներ է բաժանում վարժապետներին. լաւ չէր լինիլ, որ տարէն մի հազար ուսուցիչ յետ ձգէին և Ֆօնդի հիմքը դնէին, որ այսօր տոկոսների աւելուածով մի բաւականաչափ գումար կ'կազմէր? Վերջապէս մեր ազգի մէջ բարեսէր մարդիկ կան, որոնք տեսնելով Ֆօնդի գոյութիւնը, ուրախութեամբ կ'ձգէին իրանց լուծման հասարակաց զանձանակը: Թող այդ լուծմանը սկզբում մի աննշան բան լինին, ինչպէս աւետարանական փոքրիկ հատիկը, բայց յետոյ աճելով, առատ արդիւնք կ'բերեն: Ահա օրինակի համար հէնց մասնացոյց լինինք բարեյիշատակ Ենօք Բուդաղեանի վերայ, որ մահից յետոյ կամենալով պատուասիրել

իւր ազգը գեղեցիկ գործով և ոչ գեղեցիկ խօսքով
ահագին գումար է կտակել նրան: Եթէ ուսուցչա-
կան Փօնդը գոյութիւն ունենար, միթէ նրա բարի
հոգին անտես կանէր այդ Փօնդը, ինչպէս և անտես
չի արել զրականական Փօնդը? Մենք համոզուած
ենք, որ ձեմարանի վարչութիւնը շատ հեռու է այն
հակախուլտութեան սկզբունքից, որ ասում է. «Մեր
ցանածը մենք պիտի վայելենք, մեզանից յետոյ թող
աշխարհս էլ կորչի»! Մենք, ընդհակառակն, կար-
ծում ենք, որ նոյն վարչութիւնը այդ հարցով աւելի
է զբաղուած մօտից, քան թէ մենք հեռուից: Եւ
տայ Աստուած, որ մեր հոգեւոր Դպրանոցները այդ-
քան երկար զբաղուելուց յետոյ, շուտով կարողա-
նան իրագործել Փօնդի կենսական խնդիրը:

Ամէն ազգի առաջադիմութեան հաստատ ճանա-
պարհը է խոստովանել իւր բարոյական ցաւերը և
առանց ծածկելու դնել դրանց հրապարակի վերայ:
Հին մեղքերը մեզանից անպակաս կ'մնան, մինչև որ
մենք չընդունենք եւրոպեարար մտածելու և գործե-
լու եղանակը¹⁾:

1) Մի քանի հրապարակախօսներ, այսօր զմայլուած լի-
նելով Թաթարական ցեղերի առաքինութիւններով, առա-
ջարկում են մարմնաւոր և հոգեւոր դաշը կապել նրանց
հետ, բայց մենք խորհուրդ ենք տալիս մեր հայրենակիցնե-
րին չյափշտակուել այդտեսակ հրապարակախօսներից,
որովհետեւ նրանց ոսկրի մէջ էլ Թաթարական «դուզ» կայ:

Մեզանում էլ կան մի տեսակ գրողներ, որոնք հեղինա-
կօրէն բացադանջում են. «Միթէ ինչ որ եւրոպական է,
այն գերազանց է»? — Հարկաւոր է մեզ արդեօք այդպիսի
ջրալի մոքերը ջրել. Ժամանակ չէ արդեօք վերջ դնել այդ
հիւանդոտ ճարտասանական տնքտնքոցներին?!

VI.

Վարազվաղանի ու Վասակի թելադրութիւնը
պատրաստ արձագանք գտաւ Միհրներսէհի մէջ:

Այստեղ մենք կամենում ենք մի փոքրիկ նկարա-
գիր ընծայել Միհրներսէհի և նրա աջակից մոգերի
բարք ու վարքի մասին այնպէս, ինչպէս ազգում են
մեզ մեր տպաւորութիւնները: Յայտնի բան է, որ
այդ տպաւորութիւնները կարող են սխալ լինել յա-
տուկ այն պատճառով, որ մենք նախ հնագէտ չենք
և երկրորդ, որ հինը կարող ենք նորի տեղ ընդու-
նել և ընդհակառակն: Թող մեր նկարագիրը այնքան
էլ որոշ զծեր չունենայ, այնու ամենայնիւ մենք,
զոհէ, մի փոքր նշոյլ կ'ձգենք Պարսիկների կրօնական
ու հասարակական նիստ ու կացի վերայ: Իսկ այդ
նիստ ու կացը այնպէս էր, որ Պարսից տէրութիւնը
ոչ մի կերպ չէր կարող նուաճել հայերին, այսինքն
ազգով ստրկացնել, այլ միայն յաղթել իրանց շա-
տութեան շնորհիւ:

Միհրներսէհ «հիւ վիշապն լարաւոյն», ինչպէս
ասում է Եղիշէն, էր «մեծ հաղարպետ, վզըուկ
հրամանատար», այսինքն առաջին մինիստրը Պարսից
տէրութեան մէջ: Նա ամբողջ երկրում ամէնից զօ-
րաւորն էր. ոչ մի մարդ, թէ մեծ թէ փոքր, չէր
կարող նրա ձեռից ազատուել, մինչև անգամ ինքը
թագաւորը Յազկերտ լսում էր նրա հրամանին:
Միհրներսէհ շատ ծերացած և Ժանդոտուած մարդ
էր, — մի հասակ, երբ դադարում են անհատի առողջ
գործողութիւնները և նա տկամաց խորասուզվում է

մի տեսակ երկրապտոյտ ու երկնապտոյտ զառան-
ցանքի մէջ: Այս պատճառով Միհրներսէհ թունդ
մոլեռանդ էր, բայց իրան ձեւայնում էր բարեպաշտ
և երկիւղած, ինչպէս և ուրիշ մեծաւորները առ-
հասարակ: Ամէն օր, արեւը ծագելիս, նա դուրս էր
գալիս հրապարակ, և, մոգերի մի ամբողջ լիգէօն ա-
ռաջը ածած, հրամայում էր նրանց թափոր անել
արեգակի առաջև, ապա ծունը դնելով, սրբազան պա-
րեր էր յօրինում նրանց հետ¹⁾: Սրանից յետոյ
Միհրներսէհ այցելում էր ատրուշաններ, որ մեծ
քանակութեամբ շինած էին աշխարհի կենդանազիր
տեղերում, ահազին տափերով ու կալուածներով:
Բայց նրա զլխաւոր հոգսը այն էր, որ ատրուշան-
ներում անշէջ պահեն կրակը: Այս պատճառով
փայտակիր բանւորները, երեսը մրոտած ու ձեռները
ճագճագած, աչքերն էլ ճպռտած²⁾ օր ու գիշեր
պարտաւոր էին ծիրանի ու բնկուզի ծղաններ կրել
ու վառել: — Այս Միհրներսէհի բարեպաշտութեան
առաջին դործն էր համարվում:

Հետևում էին նրան և Պարսիկների գենպետ Մով-
պետան - Մովպետը մոգերի խաժամուժ խմբերով,
բազմաթիւ, որպէս «պապա ծով»³⁾, որոնք ցանու-
ցիր պըտըտում էին ամբողջ աշխարհը ծայրէծայր:
Նոքա երբեմն մուրացկանութեամբ, երբեմն էլ օձա-
կոչ³⁾ և գեանակոչ կախարչութիւններով պլոկում
էին ժողովուրդը իբր թէ «ի փառս աստուածոց»,
բայց իսկապէս իրանց սիբարիտ կեցութեան համար:

1) Տես Եղեշէ.

2) Տես Ղազար Փարպեցի.

3) Տես Ղազար Փարպեցի.

Այնուհետև պէսպէս նուէրներ էին բերում «Մեծ
Ահուրամազդային, որպէս. կաթ, կարագ, պտուղներ,
եփած միս, անուշահամ և հաղուազիւտ խորտիկներ
ու գինի¹⁾: Յետոյ ամօթխած մոգերը, երեսը ու բե-
րանը ծածկած փառափառ (քօյ), ծալապատիկ նստո-
ւած, լաւ մաքրազարդում էին իրանց բերած նուէր-
ները: Թէև այդ բոլորը մատաղի նշանակութիւն
ունէր, բայց խեղճ աղքատներին և ուրիշներին շատ
փոքր բան էր մնում կերութեամբ, իսկ պառ-
փայլ սովորաբար հասնում էր մոգերին որպէս «ան-
ձանց նուիրելոց»: Այդ սրբազործութեան ժամանակ
մոգերը դործ էին ածում մի տեսակ հեղուկ «հա-
ժա, կամ «ճա»²⁾, — մի բուսական, որ ծեծում էին
հաւանգի մէջ և հիւթը խմում հոգեւոր ներշնչու-
թեան համար, բայց ես կարծում եմ, որ նրանք ա-
ւելի ներշնչվում էին գինիով ու զանազան ըմպե-
լիներով, որ գաւերի ու շիշերի մէջ շարուած էին
«սրբանուէր սուփրայի» վերայ:

Երբ որ վերջանում էր կոնծաբան խնջոյքը «ի պա-
տիւ հաօմա աստուածի», Զենդ - Աւեստի թարգմանը,
որ կոչվում էր «գէստուր», տեղեց վեր էր կենում և
բացատրում հանդիսականներին, թէ ինչ է մարդուս
կոչումը պապա, — Ահրիմանի խաւար աշխարհում,
և թէ նա ինչ պիտի անի, որ պապա արժանանայ
Ահուրամազդայի լուսաւոր թագաւորութեան: «Զրա-

1) Յայտնի է որ Պարսիկների սեղանը իւր բազմաթիւ
կերակուրներով ու ընտիր ճաշակով հին ժամանակներում
առակ էր դարձած Յոյների մէջ:

2) «Haoma» կամ «Soma», լատ. asclepias — acida —
համարվում էր և սրբանուէր խնջոյքների աստուած:

դաշտի «—»-ը առնալու ճանապարհն է կենսի համար», աւարտում էր հոետորը: Բայց սխալվում էր հոետորը, որովհետեւ մարդկային դաւանաբանական ձեւերը խառն են նոյն իսկ մարդկային մոլորութիւնների հետ:

Այս այսպէս լինելով, ահա Զրադաշտի ուսումն էլ արդէն հինգերորդ դարում զրկուել էր իւր կենսական ոյժերից, թողնելով այսպէս ասել միայն մի քանի լաթեր: Մողերն էլ, լայն փէշերով ծածկելով կրօնի բարոյական մասը, որ էլի կարելի էր զանել այն մնացած լաթերի մէջ, ծէսերի մի այնպիսի կծիկ էին հիւսել, որ հաւատացող Պարսիկը չէր իմանում, թէ ինչ պիտի անել աստուածներին հաճոյանալու համար: Այնուամենայնիւ մողերը պարծենում էին իրանց կրօնի գերազանցութեամբ. այդ, յայտնի բան է, մի առերեւոյթ բարեպաշտութիւն է, որով վարակուած է բոլոր աշխարհը: Ով որ ամէն օր պարծենում է իւր բարեպաշտ գործերով, նա մի առանձին նշանակութիւն չի տալիս իւր դաւանանքին, երբ նա սկսում է բռնաբարել օտարադաւանների համոզմունքը, լինի այդ համոզմունքը թէ Կօնֆուցիայի հետեւողի, թէ Դալայ-Լամի և թէ Մուհամմեդի: Ուրիշ բան է, եթէ այս և այն դաւանութեան մէջ կան այնպիսի սովորութիւններ, որ միանգամայն հակառակ են քաղաքակրթութեան կամ մարդասիրութեան կանոններին, յամենայն դէպս տէրութիւնը կարող է գործ դնել միայն ներողամիտ և մեղմ միջոցներ և ոչ բռնութիւն: Առհասարակ կրօնական զգացմունքը, մի նուիրական շողկապ լինելով երկրի ու երկնքի մէջ, պիտի աղառ մնայ ամէն հարկադրութիւնից, մանա-

ւանդ քրիստոնեայ ազգերի մէջ, որոնց պատուէր է տուած Քրիստոսից. «Սիրիր քո ընկերին, ինչպէս քո անձը»: Դժբախտաբար, այդ «կրօնամրցումը», կամ նոյն է, թէ ասենք այդ «ազգամրցումը» աւելի մեր ժամանակի «ծաղիկն» է, ուր միսիօնարները սկսում են հալածել օտարադաւաններին իբր թէ կուլտուրական բարձր շահերի համար: Բայց միսիօնարները երբէք ընդունակ չեն եղել տարածելու կուլտուրական սկզբունք, այս բառի բուն նշանակութեամբ: Միսիօնարները միայն կարողացել են կամ ծայրայեղ ֆանատիկոսներ պատրաստել կամ անհաւատ ռէնէգատներ, հակառակութիւն սերմանելով ազգերի զաւակների մէջ և Մաքիաւելի միջոցները արդիւնաւորելով, ինչպէս նկատվում է այդ և խաղաղասէր, արդիւնարար Չինաստանի վերաբերութեամբ¹):

1) Ինչպէս յայտնի է «Երկնային կայսերութեան» անցածը ցոյց է տալիս, որ Չինացիները գեռ հին ժամանակներից, իրանց մոաւորական գիւտերով և մշակագործող արդիւնաբերութեամբ հասած են եղել մեծ կատարելագործութեան: Բաւական կ'լինի եթէ ասենք, որ տպագրական շարժական տառերը, թրձած աղիւսից շինած, Չինացիներին արդէն յայտնի են եղել 1041 թ. Քրիստոսից յետոյ: Ի դէպ. այստեղ հարեանցի յիշենք և Խորենացու հաղորդածը Չինաստանի մասին, որ այնքան ընդունի է և հետաքրքրական, նա ասում է. «Երկրիս երեսին բնակուողներից ձեռների ազգը ամենից խաղաղասէր է ու կենսասէր. Նրանց աշխարհը լիքն է բազմատեսակ պտուղներով ու բուսականներով... շատ հարուստ է մետաքսով... իսկ բոլոր մարդարիաների ու ակների թիւը այնքան շատ է, որ ասելի չի կարելի. այն պատուական զգեստները, որ մեղանում սակաւ մարդերի է մատչելի, նրանց մէջ հասարակաց զգեստ է»: Հետաքրքրա-

Այս այսպէս լինելով, մեր ժամանակի անդթութիւնները, լոյս ցերեկով կատարուած, գերազանցեցին գիշատիչ Ասորեստանի կամ Ներոնների կոտորածներից և մարդս մնաց «օյի պէ» խորամանկ» և ոչ երբէք «աղա-նո- պէ» միամիտ»:

Պարսիկների բռնութիւնը, որ ինչպէս նկատեցինք, հակառակ էր նրանց բնաւորութեան, և մի անգամ միայն բռնկեց, ապա տեղն ու տեղը վերջացաւ: Այնուհետև մարդկութեան գլխից անցաւ 1500 տարի, բայց Մեծ Վարդապետի պատուէրը. «Զիւլապու-նի-ն ղիճ Կամ յէլ ղիւլապու-նի-ն ղիճ Լուլու-ճ յէլ» այնպէս էլ մնաց «Զայն Բարբառոյ յանապա-րի»! Այո, մարդկային հոգին է այն քարքարոտ հողը, ուր հազարաւոր սերմերից միայն մինը տեղ է գտնուում բսնելու համար: Մարդասիրութեան ամենագինը դադարաւոր էր, որ երեք հազար և աւելի տարի առաջ աւանդել են մեզ ականաւոր փիլիսոփոսներ, մինչև օրս էլ մնացել են սարի դադարին, երես դարձնելով մեր խաւարային հորիզոնից և երկնքի պայծառութեան հետ միանալով: Սրգարե, մեր քաղաքակրթութիւնը ձեռք է բերել բաղմատեսակ անտեսական պայմաններ, արդիւնաբեր յոգի, ճանա-

կան է այդ տեղեկութիւնները համեմատել հելլվադի ասածի հետ. «Шелководство и приготовление шелковых матерій такъ же древне, какъ и самая китайская цивилизація... Драгоцѣнные камни, золото и полотно были въ древнемъ Китаѣ главными посредниками обмѣна». (էջ 243):

Ինչպէս ասում է Խորենացին, Մամիկոնեան ցեղը Զինաստանից է գաղթել հայաստան:

պարհների հաղորդակցութիւններ, մի խօսքով, նա կատարելագործել է մարդկային բարեկեցութեան յարմարանքը, կոմֆորտը, բայց նրա ներքին զանգուածը շատ փոքր է փոխուել:

Նոյն մաքառումը գոյութեան համար և նոյն պատերազմները, ու աւելի սոսկալի և արիւնահեղ, քան թէ հին ժամանակներում: Ինչ ասենք և նոյն քրիստոնէական ճշմարտութիւնների մասին, որոնց հոգեւորականները անգամ այնպիսի ամբարշտութեան հասցրել, որ մարդի գլխի մաղերը փշաքաղ են լինում! Մի օրինակ բերեմ ձեզ, և բաւական կ'լինի: — Ինչպէս յայտնի է, Մշու մէջ այսօր սովը արդէն անցել է իւր սահմանից. փողոցներում ու մէյքաններում թափառում են հազարաւոր քաղցած ու ծարաւ երեխաներ, որոնք օգնութիւն չգտնելով, աղիողորմ հառաչանքներով փչում են հոգին:

Ինչ էք կարծում, ինչ է ասում Քրիստոսի սպասաւորը¹⁾ այդ խեղձերի մասին, որոնց ինքը Քրիստոս արքայութեան մէջ առաջին տեղը խոստացաւ? Նա ասում է, որ այդ երկնքի պատուահասն է յատուկ այն պատճառով, որ հայերը չեն ընդունել կաթոլիկութիւն!

Եթէ քրիստոնէութիւնը մի րոպէ միայն խոստովանուէր, թէ որքան հաւատաւոր կամ անհաւատ Շարմէտաններ է ունեցել և որքան էլ ունի այժմ, ապա խիստ զարմանալ պիտի, թէ նա ինչպէս է կարողանում տանել այդ բարեպաշտ ցինիկներին ու այդ արենարբու հրէշներին!?

¹⁾ Դա է հայր Շարմէտան, որի հայրութեան շնորհից Աստուած աղատել է մեզ:

VII.

Արապապաշտ Միհրներսէհ, զառամած ու թառամած հասակում լինելով, փոխանակ իւր բազմամեղ հողին փրկելու, բոլոր ժամանակ զբաղուած էր հայերի փրկութեան հարցով, ինչպէս և քրիստոնեայ Շարմէտանները:

Ամէն անգամ, երբ որեւիցէ հասարակաց հաստատութիւն սկսվում է հին շորի պէս ձղուել, Միհրներսէհի պէս մարդիկ վերջին ճիգն են թափում զոնէ արուեստական ճանապարհով այն հաստատութիւնը պաշտպանելու, մինչև որ ծովի իննէրորդ յաշմանք անարգել սրբնթացութեամբ տափով կանի ամէն բան, որ աւելորդ է հասարակութեան համար:

Զրադաշտի կրօնը, ինչպէս ասել ենք, այլ ևս պիտանի չէր. շատ էր ապրել, շատ էլ ծերացել, բայց Միհրներսէհ ընդհակառակն էր կարծում: Նա հանգիստ չէր տալիս Յազկերտին, որ սա ազգու միջոցներ գործ անէ Զրադաշտի ուսումը հայերի մէջ մտցնելու: Թագաւորը¹⁾, որովհետև զլիսում թագաւորական իմաստութիւն չունէր, ախորժելով լսում էր Միհրներսէհի շնչոցներին: Նա մոռանում էր, որ թագաւորին արժան է միայն հսկել բոլոր հպատակների բարօրութեան վերայ. արդարութեամբ կշռել ամէն մէկի վաստակը առանց կրօնի խտրութեան, պատճառ

¹⁾ Սրա մասին Եղիշէն ակնարկելով ասում է. «Թագաւորը, որ իւր աթոռի վերայ իմաստութիւնն էլ չունի, չի կարող համապատասխանել իւր վիճակին», այսինքն իւր բարձր կոչման:

ինքը թագաւորը պատկանում է բոլոր նուաճած յեղերին և ոչ թէ մէկին: Նա մոռանում էր, որ իշխանները փառքի և աւագութեան համար ման են ածում իրան և աւագակաբար քանդում խեղճերի տուն ու տեղը: Հայերը ասում են նրան. «Թագաւորը ապրած կենայ, մենք այսքան տարի հաւատարմութեամբ ծառայել ենք քեզ և քո նախնիներին. ոչ մի դաւաճան չի եղել մեր մէջ. պատերազմներումն էլ զէնքով ենք սրբել մեր քրտինքը. աշխարհի հարկերն էլ վճարել անխափան և ոչ ուրիշների պէս դողացել: — Ասա, արքայ, մեր դաւանութիւնը կամ ազգութիւնը քեզ ինչ է արել?» Թագաւորը, շրջապատած ազէտ մոգերով, որոնց հրեային կարելի էր կարգաւ «Խաւարն անգոյ և «Կէնաթին», պատասխանում է նրանց. «Յանցանք եմ համարում ձեր արած ծառայութիւնը ու ձեր տուած հարկերը, քանի որ չէք ընդունում մեր լուսեղէն հաւատը»: Սրանից յետոյ թագաւորը ձայն տուաւ դպրապետին և հրամայեց նրան մի նամակ գրել հայաստան, ծաղրելով հայոց դաւանութիւնը ու կրօնական սովորութիւնները:

Հայերը նամակը ստացան Արտաշատ քաղաքում, ուր և հաւաքուեցին 16 եպիսկոպոս և Յովսէփ կաթողիկոսի նախագահութեամբ կազմեցին ընդհանուր ազգային ժողով: Այդտեղ ներկայ էին ուրիշ բազմաթիւ հոգեւորականներ, մեծամեծ նախարարներ և բոլոր դասակարգերի պատգամաւորները: Հայոց ազգը մի այդպիսի բազմամարդ ժողով չէր տեսած քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ: Առաքելական դարերի մաքրութեամբ, հաւատով անկեղծ, հայրենասիրութեամբ անկաշառ, ժամանակակից գիտութիւն-

ներին քաջ ծանօթ, իսկ մտքերի զստաւորութեամբ օրինակելի այժմեան աստուածաբանների համար,— ժողովը այնպիսի համարձակ պատասխան ուղարկեց թագաւորին, որ շատերը ահով-դողով էին լսում: Պատասխանն էլ այսպէս էր վերջանում. — «Այս հաւատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ոչ սուր, ոչ կրակ և ոչ ինչ տեսակ էլ լինին հարուածներ... Քո սուրը,— մեր պարանոցը, մեր բոլոր ունեցած չունեցածը քո ձեռին է, ինչպէս էլ ուղում հս— արա»... Յազկերտ որ այս լսեց, սկսեց օրհասական վերաւորի պէս կրճտել իւր ատամները:

Հայոց զլխաւորներին իսկոյն պահանջեցին Պարսից դուռը և ստիպեցին իրանց հաւատը ուրանալ: Նախարարներն էլ քաղաքական բարձր շահերի համար երեսանց ընդունեցին կրակապաշտութիւն: Այս որ տեսաւ թագաւորը, ուրախութիւնից խելքը թռաւ. նա բոլորին զրկում էր ու համբուրում, բոլորին էլ սիրելի բարեկամ անուանում: Այնուհետև նախարարներին տալով զօրք և եօթ հարիւր մոզ, տուին նրանց և մի կրօնական հրահանգ, որ տանեն հայաստան:

Ահա այդ հրահանգի զլխաւոր կէտերը.—

«Հայոց եկեղեցին իւր բոլոր կարգերով պէտք է փակուի: Վարժապետները այլևս իրաւունք չպիտի ունենան ժողովուրդը ուսուցանելու, այս պատճառով հայոց զպրօցներն էլ գոյութիւն չունին: Նախարարների և հասարակ կարգի տղայ ու աղջիկ պէտք է հաւաքուեն հրապարակներում մոզերի դասախօսութիւնը լսելու ու դաստիարակուելու համար: Սովորական ամուսնութիւնն էլ պէտք է լուծուի և սահ—

մանուի բաղմակնութիւն. երկու ևս սեռի մէջ պիտի անխտիր մերձաւորութիւն լինի, թէկուզ մի ընտանիքի անդամ լինէին և արեւակից»: Միով բանիւ, հայերը պիտի մոռանան ոչ միայն իրանց կրօնը, այլ և հայերէն խօսքը, ուրիմ մեր ժամանակի մոլոր, բոլոր զրականութիւնն էլ, որը այսօր ապահոված է տէրութեան անշարժ օրէնքով:

Մենք այստեղ կամենում ենք մի երկու խօսք տեսել «Բերչա—ոյնէրի խնամ—լէան» և «Բաղմակնութեան» մասին:

«Մերձաւորների խնամութիւնը» և «բաղմակնութիւնը», ինչպէս երևում է, հայերի մէջ էլ, գոնէ բարձր դասակարգում, գոյութիւն է ունեցել: Առաջինի մասին Խորենացին ասում է. «Յազկաց նախարարացն բառնայ (ներսէս Մեծն) զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազահելոյ սեպհական ազատութեանն առնէին» (զիւլք Գ, զլ. Ի):

Բայց թէ «մերձաւորների խնամութիւնը» ինչ աստիճաններով է կատարուել, ուրիշ աղբիւրներ չունենալով, դժուար է որոշել: Յամենայն դէպս պէտք է մտածել, որ խնամութեան աստիճանները, մանաւանդ քրիստոնէական դարերում, ներսէս Մեծի ժամանակ, այնպէս մօտ չպիտի լինէին, ինչպէս Եղիշէն է հաղորդում «Ճրահանգների մէջ» Պարսիկների վերաբերմամբ,—այն, որ և ձեռնարկի „Исторія культуры“ զիւլքն է հաստատում (էջ 380): Իսկ ինչ որ «բաղմակնութեանն» է վերաբերվում, ահա նոյն Խորենացու խօսքերը. «Ներքինիս խղիլ հրամայէ (Վաղարշակ) և նահապետ նոցա (կարգէ) զհայր իշխան» (որ և Մարգպետ էր կոչվում: Այս սովորու—

թիւնը եղել է և Պարսիկների մէջ.— „Въ древней Персіи существовать уже унижительный для женщины институтъ надзирателей—свнуховъ“, ասում է Նելլվալդ (էջ 380): Ուրեմն Հայր-Մարդպետը թագաւորի կանանցի գլխաւոր վերակացուն էր, ինչպէս այժմ Սուլթանի «Հարեմի» գլխաւորը ասվում է «Կզլար-Սըլասի»:

Սրժանի է ուշագրութեան այն հանգամանքը, որ Խորենացին բազմակնութեան հաստատութիւնը հէնց Վաղարշակի օրերիցն է գնում, որ Պարսիկների աշխարհից Հայաստան գալով, գուցէ իրանց սովորութիւնն էլ հետն են բերել:

Շատ կարելի է, որ բազմակնութիւնը Հայերի մէջ Վաղարշակից առաջ էլ եղած լինի, բայց որ Վաղարշակը օրինական ձև է տուել ամուսնութեան դործին և որոշել յարաբերութիւնները ամուսնացողների մէջ: Բազմակնութեան հետքերը մենք տեսնում ենք Խորենացու պատմութեան մէջ Վաղարշակից համարեա 300 տարուց յետոյ, այն է Արտաշէս երկրորդի ժամանակ (78 — 120 Քրիստոսից յետոյ), ուր Արիստոն Փեղզացին, ականատես լինելով նրա թաղման հանդիսին, ասում է. «Թէ որքան ամբոխութիւնք (շատ մարդիկ) մեռան (մեռցրին իրանց) ՚ի մահուանն Արտաշէսի. «Իբեւէ կանայք և հարճք և մտերիմ ծառայք» (Գիրք Բ., գլ. Կ.):

Բայց բազմակնութիւնը, ինչպէս երևում է, շարունակուել է Հայերի մէջ և քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ, որովհետեւ Խորենացին (գիրք Բ., գլ. ԴԲ.) Տրդատի վախճանի մասին խօսելով, ասում է ի միջի այլոց. «Ընդգլխմանն կամաց թագա-

ւորին յաղաղս կրօնիցն քրիստոսականաց, զհետ երկալով կամաց կանանց և հարճից»: Նելլվալդն էլ («Исторія культуры», стр. 122) այսպէս է խօսում այդ իսկ հարցի մասին. «Յայտնի է, որ քրիստոնէական եկեղեցին անդամ, ամուսնութիւնը իւր եօթ խորհուրդներից մինը համարելով, երկար չկարողացաւ վերցնել բազմակնութիւնը հռովմայեցւոյ կայսերութեան մէջ, մինչև որ 393 թ. հրապարակով արգելուեց այդ սովորութիւնը հռովմայեցի հպատակների համար»:

Սյս բոլոր տեղեկութիւնները նորից կարող են վկայել Հայկական պատմագրի կամ նրա աղբիւրների վաւերականութիւնը, պատճառ այժմեան հնախօսութեան և կուլտուրայի դրականութիւնն էլ նոյնն է հաստատում, քանի որ Խորենացու ժամանակ այդպիսի դրականական հաւաքածուներ չեն եղել:

VIII.

Վերոյիշեալ հրահանքի յօդուածներից պիտի մի ծանր խնդիր որոշուէր, — «լինել թէ չլինել հայութեան»? Եթէ Հայոց դպրոցները պէտք է փակուեն և Հայ դաստիարակութիւնը վերջանայ, էլ ինչպէս կարելի էր ապահովել ազգութեան տարրը!?

Յայտնի է, որ ամէն ազգի լեզուն, որպէս իւր մէջ ժողովուրդ մի կենդրոն, ամփոփում է այդ ազգի բոլոր հոգեբանական և ֆիզիոլոգիական դործողութիւնները, այսինքն որ հայանալը կամ հայացոյն—ճը, հայանալը կամ հայացոյն—ճը բացառապէս կարող են կատարուել իրանց լեզուով: Սյս պատճառով կր-

Թուած ծնողները, ինչպէս և հասարակութիւնը ու դպրոցները, միասին աշխատում են, որ առաջին ձայները, երեխայի ականջին հասած, լինին մայրենի լեզուով: Իրա հետեանքը այն է, որ «այդ ձայները», անդգալի դրոշմուկով «խօսքի գործարանի մէջ», երանական յնորքի պէս կախարդում են մանկական սիրտը և պատրաստում ազգային նուիրական ճրգ-տումների համար: Ահա թէ ինչու ոչ մի կերպ չի կարելի արդարացնել մեր այն ծնողներին, որոնք մի անբնական ուղղութիւն են տալիս իրանց երեխաների դաստիարակութեան: Նրանք հէնց սկզբից, երեխան աշխարհ գալիս, նրա հոգին, նրա ներքին ու արտաքին կեանքը մկրտում են օտար աւազանի մէջ և այդպէս առաջ տանում, այնպէս որ այն, որ երեխայի համար պէտք է լինէր հարազատ ու ընտանի, այժմ թուում է նրան անհարազատ և խորթ: Յետոյ, երբ որ երեխան սկսում է մեծանալ ու ճանաչել իւր աջ ու ձախը,— և ահա հոգատար ծնողները սովորեցնում են նրան ամէն բան բացի հայերէնից, ասելով, «որ այդ յետոյ կ'լինի»: Վսհ, պատուական ծնողներ, զոնէ այդ էլ չասէիք, որ յետոյ կ'լինի: Հարցնում եմ ձեզ, արդեօք յետոյ ուշ չի լինիլ?

Իրաւի, զարմանալի է հայերիս անտարբերութիւնը դէպի մայրենի լեզուի իրաւունքը: Իրաւի, մենք շատ շուտ ենք ենթարկվում օտարի ազդեցութեան, թէև այդ օտարը ոչ մի մտաւորական առաւելութիւն չունենար մեր առաջն: Եթէ մեր զրոյցին Վրացի է, կամ Թուրք, կամ Չէրքէզ, հաւատացած լինիք, որ հայը իսկոյն կ'սեպհակունէ նրանց լեզուն, իսկ իւրը կտրի վերայ կրճդի: Ես մտածում եմ, որ մեր չինա-

զմայլ օրերին, եթէ Չինացիներն էլ վեր կենային ու գային հային ընտելակցելու, անտարակոյս, նոյն հայի շրթունքին կ'հնչէր և միավանկ ու դժուարամարս Չինարէնը!

Բայց մենք դառնանք մեր լեզուի ու կրօնի խնդիրներին անցած ժամանակներում:

Ինչ որ Պարսիկներն էին կամենում անել հայերի հետ հինգերորդ դարում, հռովմայ Պապերն էլ նոյն բանը ձեռնարկեցին 12-դ դարում: հռովմայ Պապերն էլ նոյնպէս «միակ ուղղափառ» հռչակելով իրանց դաւանութիւնը և խղճալով հայերին, որպէս «աղանդաւորների», կամեցան նրանց առաջն բանալ արքայութեան դռները, մանաւանդ որ նոքա կարծում էին և կարծում են, որ երկնքի բանալին իրանց ձեռին է, բայց ինչ պայմանով? Մտցնելով Կիլիկիա, Լեոն II երկրի մէջ Լատին լեզուի ուսումը և երեխաներին վարժել մինչև տասներկու տարեկան հասակը¹⁾, որպէս զի նրանց ուղ ու ծուծը միանգամայն տոգորուի «ուղղափառութեամբ»²⁾:

Պէտք է արդարութեամբ խոստովանուենք, որ հռովմայ քահանայապետները և հռովմայ եկեղեցին զարմանալի պեղազօդիկական տակտ ունին: Նրանց քաջ յայտնի է այն հանգամանքը, որ մարդուս ա-

1) «Կարգել յերկրի տէրութեան Լեոնի ուսումն Լատին լեզուի և վարժել զմանկունս յերկոտասան ամենից 'ի վայր»: (Տ. Ալիշան «Սխուան»):

2) Մենք այսպէս խօսելով, ամենեւին հեռու ենք կրօնական խնդիրներ շօշափելուց. մենք բարեխղճութեամբ կարդում ենք այն, ինչ որ գրուած է և միայն այդ գրուածի ոգին վերլուծում:

պազայ գործունէութիւնը տիրապէս կախուած է նրա սկզբնական տալաւորութիւններէյ, որ և մինչև 10—15 տարին արդէն հասնում է կատարելութեան: Այս պատճառով կաթօլիկ քարոզիչները սովորաբար չափահասների հետ բան չունին. նրանց գլխաւոր առարկան երեխան է:

Երբ որ Լեոն II ստացաւ հռովմայ «Միաբանութեան» վերջին թուղթը, «Կոչեալ զկաթօղիկոսն և զեպիսկոպոսսն հարցանէր, թէ զինչ պատասխանի տացեն պատգամին, և նոքա ոչ հաւանեցան առնել զինդիրն (կատարել), և ասէ ցնոսա Լեոն. Դուք մի ինչ հոգայք վասն այգորիկ, ես հաճեցիյ զմիտս նոցա առ անգամ մի կեղծաւորութեամբ» (տես «Սիսուան» 468 էջ):—Միայն այս պայմանով 12 եպիսկոպոսը (որոնց մէջ էր և Ներսէս Լամբրոնացին) համաձայնեցին ստորագրել «Պատասխանը», իսկ կաթօղիկոսը, որպէս հաւասարադօր և ինքնուրոյն եկեղեցու գլուխ, բացէ ի բաց հրաժարուից ստորագրել:

Այսպիսի առաջարկութիւններ եղած են և ուրիշ ժամանակներում և ոչ միայն հռովմէական, այլ և ուրիշ եկեղեցու կողմից, բայց հայոց ազգը միշտ մաքաւ է այդ առաջարկութիւնների դէմ: Թէ մեր նախնիները լաւ են արել կամ թէ ոչ, որ այդպէս են գործել և կամ որ կրօնական ձեւը աւելի «ուղղափառ» է,—հարցը ամենեւին զրանում չէ, այլ որ մեր ամենաթշուառ միջոցներին հայի նշանաբանը միշտ եղել է Լուսաւորչական գաւանթութիւնը, որ թէ այսպէս և թէ այնպէս մնացել է ինքնուրոյն և անկախ: Եթէ Լուսաւորչականը այնքան էլ հաշտ

աչքով չի նայում այլադաւանի վերայ, զրա պատճառը այլադաւանութիւնը չէ, այլ որ «այդ այլադաւանը» աշխատում է նրա ծոյցից խլել հարազատ որդին ու օտարացնել:

Այս պայպէս լինելով, հռովմի ջանադրութիւնների հեռեանքը այն եղաւ, որ հայոց կաթօղիկոսը, Գրիգոր Տղայ, ընդունեց Պատերի թաղը «Գիւլա», իսկ «միութեան թղթերը» այնպէս էլ մնացին գրուած թղթեր: Հինգերորդ դարի հայերն էլ, Պարսից «հրահանդը» տեսնելով, պարսպաձև շարուեցին միմեանց ետեից «Էւանգիլիս և Դահուան» գնով պաշտպանել իրանց լեզուն, կրօն ու հայրենիք:

Այնուհետև ուրիշ քաղաքական ալիքներ եկան և աւերակներով ծածկեցին մեր հայրենիքը: Բայց ոչ մի ալիք, ոչ մի հալածանք չկարողացան հային բաժանել իւր սիրած հողից: Մինչև այսօր էլ հայը, մի աչքը ձգած իւր պապերի գերեզմանների վերայ և միւսը իւր արտի վերայ, մնաց իւր հողին հաւատարիմ ընկեր: Իրաւի, եթէ բնութիւնը երկու ձեռքով չէ բաշխել հային աշխարհի բարիքը, բայց նրա երկու ձեռն էլ չի կապել ծուլութեան ձիւրքով: Ընդհակառակն, նոյն բնութիւնը զրել է հայի մէջ աշխատասիրութեան ոգի, որ կուլտուրական կեանքի ամենահաստատ զրաւականն է: Բայց ափսոս որ այդ գեղեցիկ յատկութիւնը շատ փոքր նշանակութիւն կունենայ, եթէ լուսաւորութեան զրօշակն էլ չծածանուի հայի գլխին: Ձայն տալ հային դէպի նոր կեանք ու յարութիւն, որոնք միջոցներ, որ մեր սիրունգը չլուծուի օտարի մէջ, — այն անանցանելի վիճն է, որի առաջ շարվում է զործողի միտքը:

Սյսպիսի յիշողութիւններից երբեմն մարդու սիրտը լցուած, չի կարող անտարբեր մնալ դէպի իրողութիւնը: — Սյո, նա սե թանաքի տեղ միայն սե արտասունքի կաթիլներ է թափում թղթի վերայ! Եհ, ինչ երկար խօսեմ, ընթերցող, երբ երկար խօսելու էլ իշխանութիւն չունինք:

«Դու քու դարդերը լաւն գիտես, խեղճ Ադամ Ազբար, Խալիւ ի՛նչ ա խաբար»:

Ուրեմն, եկէք էլ ի դնանք մեր հին հայրենիքը և տեսնենք, թէ ի՛նչ են անում այնտեղ մոգերը:

IX.

Մոգերը, ինչպէս ասում են, իրանց «Գ—ւ — Ժ—ւս» հաւաքած ճանապարհ ընկան: Ճանապարհորդութիւնը դէպի հայաստան մի կատարեալ տծնահանդէս էր մոգերի համար: Նոքա, դեռ ևս հայոց աշխարհը չհասած, ճանապարհին փայտեր էին ձգում, վիճակ էին հանում, թէ ով ի՛նչ նահանգ պիտի ստանայ ուսուցանելու համար: Յայտնի բան է, որ մոգերի գլխաւոր դարդը այնքան էլ ուսուցանելը չէր, քան թէ իրանց լայն զրպանները խճողելու: Բոլորն էլ շտապում էին «տաք տեղեր» զրաւել, որովհետեւ «ով չուշտ—նա կուշտ»: Քսան ու չորս օրում մոգերը նախարարների հետ միասին մտան հայաստան և կանգ առան Անդղ գիւղում: Ապա նրանք, օգնութիւն կանչելով իրանց սուրբերին, — չօրգատին և Ամուրդատին, փորձեցին գիւղի եկեղեցին քանդել: Բայց ինչպէս կարող էին քանդել քա-

նի որ պատրաստ կանգնած էր այդտեղ բաղմաճաց Աւոնդ երէցը! Սա, մատեմատիկաբար ճիշդ հաշուելով մոգերի գալու և դադարելու կէտը, իսկոյն իւր ընկերակիցների հետ վրահասաւ և պատեց եկեղեցին: Եւ որովհետեւ այդպիսի դէպքերում մարդկութեան ձեռին մի ուրիշ հնար չկայ պաշտպանուելու, քան թէ գործ դնել «ալի ընդ ալան, ասա՞ն ընդ ասա՞ն», — Աւոնդեանք էլ, զինւորուած քարերով ու գաւաղաններով, մոգերի կառափները (քեալլա) ջարդեցին և մնացածներին ցանուցիր յետ քշեցին¹⁾:

Անտարակոյս, հաւատափոխ նախարարներն էլ միացան Աւոնդի խմբի հետ և այնուհետեւ սկսուեց ընդհանուր տաքնապ:

Սյս բոլորը շուտով հասաւ թագաւորի ականջին. — Խռովեցաւ հերովդէս և ամենայն երուսաղէմ ընդ նմա»:

Ուղիղ 451 թւականն էր Քրիստոսից յետոյ: Տիգրան, Պարսից մայրաքաղաքը, միանգամայն փոխել է իւր սովորական կերպարանքը. թագաւորական պալատն էլ խորասուղուել մի անփարատելի տրտմութեան մէջ: Միհրաններէհ, Մովսիստան Մովսիստ միւս

1) Սյստեղ Ազար Փարպեցին մի շատ բնորոշ բան է պատմում. նա ասում է. «հայոց կանայքը, որոնց մոգերը եկել էին կրթելու, այնպիսի զուանքով էին նայում նրանց վերայ, որ պատահելիս շուռ էին գալիս, որ մոգերի երեսը անգամ չտեսնեն. Նոքա իրանց դաստիարակներին էլ խստիւ պատուիրել էին, որ երեսաներին երբէք չանցկացնեն մոգերի մօտից»: Սյսպէս էին հինգերորդ դարի կրթուած կանայք... մաքրափայլ, ինչպէս հայրենի հովիտների մանուշակն ու շուշանը:

մեծամեծների հետ, ձեռները ծալած, չեն համար-
ձակվում նայել թագաւորի երեսին, որովհետեւ հա-
յերը, «երկջոտ ու սարուկ հայերը», շատ և շատ
զերազանցեցին թագաւորից իրանց մարդկային ար-
ժանաւորութեամբ: Ուրեմն հարկաւոր է պատժել
այդ սարուկներին: Ամէն կողմից զօրքեր են որ թափ-
ւում են Տիրջոն, կաղմակերպվում են գնդեր ու
վաշտեր ու սպառազէն փղերի երամակներ:—Եւ շողաց
բախտավճիռ սուսերը:—Չու! դէպի պատերազմի
դաշտը:

Արտաշատն էլ պահաս հոգսի մէջ չէր. միայն
այստեղ ոչ մի արամութեան ստուեր չէր երեւում,
ինչպէս Պարսից բանակում: Բոլորն էլ պայծառ և
զուարթ արամաւորութեան մէջ էին:

Ահա վրանից դուրս է ցայտում և Վարդանանց
ողին,—ինքը Վարդան Մամիկոնեան, որ երիտասարդա-
կան աշխոյժը երեսին, դառնալով դէպի զօրքը, ասում
է. «Տղէք, «Մահը ընկերով հարսանիք է». թող
ձեր գործերը վկայեն յետագայ սերունդներին, որ
դուք ձեր արիւնը ջրի պէս էք թափել հայրենիքի
պատուի համար: Ես զգում եմ, ես հաւատում եմ,
որ այսօր Միաճին Որդին է մեզ առաջնորդում:
Տէրն օգնական ձեզ, քաջեր»: Իսկ զօրքը ներդաշնակ
եղանակելով «Դաւան, Տէր, զայնոսիկ, ոյք դատին
զմեդ. զինու և ասպարաւ օդնեա մեդ»—տեղից շար-
ժուեցին դէպի Աւարայր:

Թնդաց հայկական բամբիւր. ժողովուրդն էլ, որ
խռնուած էր այնտեղ ահագին բազմութեամբ, ցրն-
ծալից աղաղակեց. Լուսաւորչու աջը ձեղ օդնական,
սուրբ մարտիրոսներ!

X.

«Երկինք ու երկիր խիստ հառաչեցին,
«Թէ ինչպէս ընկաւ Վարդանն ահագին»:
(ԱՆՏԻՊ ՈՏԱՆԱՌ):

Ստում են, որ պատերազմը ստեղծում է հերոս-
ներ: Շատ կարելի է, թէեւ եղել են և կան պատե-
րազմներ, որոնք ոչ մի հերոս չեն ստեղծել. բայց
ստոյգ է, որ հալածանքը ստեղծել է և հերոսներ, և
մարտիրոսներ:

Ազգերի պատմութեան մէջ մենք սովորաբար երեք
տեսակ հերոսներ ենք նկատում, որոնք այլևայլ
ճանապարհներով են գործում ազգը փրկելու նպա-
տակով նրա ընդհանուր ճգնաժամին: Առաջին կարգի
հերոսները նրանք են, որոնք առանց հաշուելու իրանց
ոյժը, համարձակ դուրս են գալիս ահագին թշնամու
դէմ և, արխաբար նահատակուելով, ընկնում պա-
տերազմի դաշտում: Սոքա համադրւած են, որ իրանց
մահը կ'փնայ մի անջնջելի արձան գալոյ սերունդների
առջև, նրանց կրծքի մէջ սէր ներշնչելով դէպի հայ-
րենիքը:—Սյսպէս են մեր պատմութեան մէջ Վար-
դանանք և գլխաւորաբար ինքը Վարդան: Երկրորդ
տեսակի հերոսները նրանք են, որոնք գործում են
աւելի քաղաքագէտի ճանապարհով, քան թէ պա-
տերազմով, որով և նուաձում են թշնամու սիրտը
և թշուառութեան առաջը առնում:—Մի այսպիսի
հերոս էր Վարդանի կղբօրորդին,—Վահան Մամի-
կոնեան: Իսկ երրորդ կարգի հերոսները, թէեւ ան-
ձամբ քաջութեան հրաշներ են գործում, բայց նա-

խառնակութեամբ աղբի թուրթուրներ, ուղղակի գնում են հակառակորդի բանակը և խնդրում հաշտութիւն:

Սյգպիսի հերոսներ մենք տեսնում ենք Բագրատունեաց և վերջին Ռուբինեանց ժամանակներում: Սակայն յետագայ սերունդների համար միշտ գերազանց ու պանծալի են հռչակվում առաջին կարգի հերոսները, որոնց արիւնը, կարծես թէ ամբողջ դարեր հոսելով, չի ցամաքում, որովհետեւ, ասում են, որ նա մի ուրիշ բաղադրութիւն ունի.—այն սքանչելի է, կենսունակ և թարմ!

Իրաւի, հէնց այդ հերոսների պատկերը մի գեղարուեստական քանդակի պէս է տպւում արվում աղբի զխտակցութեան մէջ, այնպէս որ աւելի հեշտ է նրա թռեքըրը դուրս քաշել կրծքից, քան թէ այն պատկերը, որ արդէն տարրացած է նոյն աղբի հոգու հետ:

«Նորահրաշ պահապան» Վարդան շատ լաւ էր հասկանում, որ այսօր չէ եզուց չայոց բարօրութիւնը պիտի ձեռից գնայ և ստրկութեան լուծը ծանրանայ աղբի գլխին: Հարկաւոր էր, ուրեմն, մի դիւցազնական դէպք, մի տրագիկական վախճան, որ մշտավառ հրդեհի պէս բորբոքէր աղբի երեակայութիւնը:—Սյգ մշտավառ հրդեհը Վարդանանայ մահն էր Աւարայրի դաշտում:

Մեր անցած կեանքի մէջ փառաւոր յաղթութիւններ էլ են եղել, բայց ոչ մի փառաւոր յաղթութիւն չէ ունեցել այնքան կախարդիչ ազդեցութիւն, որքան ունեցել է Աւարայրի փառաւոր պարտութիւնը! Եւ իրաւի, այնուհետեւ Աւարայրի դաշտը գեղեցկացաւ մի երկնային գեղեցկութեամբ: Դարերի արտասուները, հայրենազուրկ աչքերից ցոլելով, թարմ և

դալար պահեցին մարտիրոսական ծաղկունքը,—Վարդանանց ոսկրները, որոնք նուիրական խաւերով մեծացրին, բարձրացրին Աւարայրը և կազմեցին մի կատարեալ Գողգոթա, ուր չայոց նահատակները, շարունակ փոխանորդութեամբ խաչուելով, այսօր էլ աղաղակում են դէպի երկինք. «Էլէ՛, էլէ՛, լա՛ս ապառա՛նի»:

Բայց այդպիսի մարդկանց յիշատակի տօնախմբութիւնը լոկ զգացումների ցոյց կ'լինէր, եթէ մենք չգայինք և մի դրական եզրակացութեան, որ ծաղում է նոյն մարդերի գործունէութիւնից:

Դառնանք Վարդանանց պարագլուխ Վարդանին և տեսնենք, թէ դա ինչ խրատական և հայրենասիրական դասեր է տալիս մեզ ներկայումս:

Սյն, որ մենք ասում ենք «աղբային պարծանք», «անյնական պարծանք», Վարդանի տուած դասերից երեւում է, որ դրանք փքուն ու ուռած խօսքեր են, եթէ գործով էլ չեն արդիւնաւորուած: Ահա Թաթարական ցեղերն էլ ունին այդպիսի ազգային պարծանք, բայց այդ պարծանքի մէջ մի էական բան չկայ, այլ միայն ջուր է, որ դարդակ լափին է տալիս: Նոցա միակ պարծանքը այն է, որ ամէն քաղաքական բարեշինութիւն աւեր են դարձնում: որ նրանց մէջ ոչ անշահասէր բարոյական ձգտումներ կան և ոչ էլ պետական խնամք ընդհանուրի համար:

Ուրեմն, ազգային կամ անձնական պարծանք պիտի լինի մեր ներքին արժանաւորութեան ու գեղեցիկ գործերի հետեանքը, ինչպէս ինքն էլ խնկիկ զօրավարը ցոյց տուեց իւր օրինակով:

Իրաւի, չայոց աշխարհի ամենապատուական և ամենահարուստ մարդը մեր ընդհանուր թշուառու-

Թեան միջոցին, դարձաւ ամենավերջին սպասաւոր բոլորի համար: Նա հասարակ ծառայի պէս ման էր գալիս ամէնտեղ, անդադար այցելում էր իւր բազմաթիւ զօրականներին. ով զէնք չունէր — զէնք էր տալիս, ով ձի կամ շոր չունէր, պատրաստում էր առանց խնայելու, որովհետեւ Վարդան գիտէր որ փոքր կէանքի համար է և ոչ կէանքի փոքր համար: Բայց նա իւր Թանկագին կեանքն էլ չխնայեց աւելի Թանկագին նպատակի համար!

Այսպէս, եթէ հասարակ մահկանացուներս ընդունակ չենք Վարդանանց օրինակին հետեւելու, գոնէ նիւթական մասով հետեւինք նրանց: Ես հասկանում եմ, որ Վարդանանց օրինակը շատերիս համար հրապուրիչ է. — և ինչպէս չհրապուրուենք գոնէ առերեւոյթ ցոյցի համար! Այո, մենք էլ շատ բան ենք ուզում անել, բայց ոչինչ չենք անում: մենք մեր բոլոր կեանքը մտածում ենք վեհանձն և առատաձեռն հանդիսանալ, բայց մեր հոգեկան տրամադրութիւնը այնպէս է, որ թոյլ չի տալիս մեզ մոլթ աշխարհից ոտք կոխել դէպի լոյս աշխարհ, և մենք վերջի վերջոյ էլի մնում ենք վեհանձնօրէն դձուճ և կճկուած ձեռքով!

Այս է շատերիս քաջութիւնը:

Բայց այստեղ յօդուածիս նիւթը Վարդանանց երիտասարդական գործը լինելով, չեմ կարող չլինել մեր երիտասարդ սերնդին և ասել. Ո՛վ ազնիւ սերունդ, ցանիր գեղեցիկը ու աստուածայինը, որ քո այգին էլ կանաչե բարի սերմերով. ցանիր, եթէ կամենում ես, որ դու, քո ընտանիքը, քո աղբն էլ բախտաւոր լինիք: Ապա թէ, մենակ նստած, առանց

մասնակցելու ուրիշի ցաւերին, պիտի միայն ուտես և պարարտանաս, լաւ էր որ դու բնաւ աշխարհ չգայիր և մարդուս կոչումն էլ չվերաւորէիր!

XI.

Որովհետեւ պատմութեան մէջ, ինչպէս և կեանքի մէջ, չի կարող լինել պատահականութիւն, այլ ամէն մի իրողութիւն առաջ է գալիս իւր նախապատճառից կամ նախընթաց գործողութիւններից, — մենք էլ համառօտ նշանակենք այն Ֆակտորները, որոնք պատրաստեցին Սւարայրի անցքը:— Այդ Ֆակտորները են. 1) Մեսրոպեան - Սահակեան դպրոցի բարի ազդեցութիւնը, որով տարածուեց զրազիտութիւն ժողովրդի և, մանաւանդ, բարձր դասակարգի երկու ևս սեռի մէջ. 2) Կրթութեւ և տաղանդաւոր զօրավարների զուգադիպութիւնը. 3) Դարի կրօնական զաղափարները, և 4) Կանանց մասնակցութիւնը ոչ միայն դաստիարակութեան, այլ և պատերազմի գործին:

Այս բոլոր պրակները համառօտ կ'ըլտաբանենք այնպէս, ինչպէս մենք ենք հասկանում, որով և կ'ամփոփենք մեր «Յիշողութիւնները» Վարդանանց տօնի առիթով:

Այստեղ մենք չենք կարող երկար խօսել հինգերորդ դարի կուլտուրական շարժումների մասին, որոնց համագործութիւնը մեծ ծաւալ տուեց հայկական մտքին, որ առաջ փակուած էր աղքատ և անարդիւնաբեր շրջանակի մէջ: Այսքանս միայն կ'ասենք, որ այդ շարժումներին պարագլուխ հանդիսացան եր-

կու մարդ, Սահակ և Մեսրոպ: Սրանք, ժամանակի միատիկական ձգտումներից երես դարձնելով, իրանց բոլոր գործունեությունը նուիրեցին մեր աշխարհի իրական պահանջներին, և ոչ մի դժուարություն չկարողացաւ թուլացնել նրանց անխոնջելի բազուկը: Սահակի և Մեսրոպի հայրենասէր ոգին ստեղծեց հայկական զիր ու գրականություն, որոնց շնորհիւ հայը իրաւունք ստացաւ չնչնել իւր անունը մարդկային ցեղերի ցուցակից: Արժանի է ուշադրութեան այն հանգամանքը, որ հայոց նախարարներն էլ, ինչպէս և ժողովրդի մեծամասնությունը, ամենայն համակրութեամբ նպաստում էին լուսստորութեան գործին, որ և ինքը բարեսէր թագաւորը Վռամշապուհ աւելի բարձր և փառաւոր էր համարում իւր թագաւորական գահից:

Սյնուհետեւ նոր բացուած դպրոցները իրանց բազմաթիւ աշակերտներով սկսեցին գործել և «լցաւ ամենայն երկիրս հայոց գիտութեամբ... իբրեւ զժուրս բազումս, որ ծածկին զծովս»:

Պէտք է նկատել, որ Վարդանանց զխաւորները մեծ մասամբ Սահակի և Մեսրոպի աշակերտներն էին, շատերն էլ կապուած միմեանց հետ կամ նոյն Սահակի տան հետ ազգակցութեամբ կամ խնամութեամբ: Բաւական կ'լինի ասել, որ պատերազմի կազմակերպողը, Վարդան, մօր կողմից Սահակի թոռն էր, որ մեծ խնամքով դաստիարակեց նրան, ինչպէս և նրա հմայեակ և համազասպեան եղբայրներին: Արշաւիր Արշարունի, որի երիտասարդական կուրծքը եռում էր դիւցազնական քաջութեամբ¹⁾, Վարդանի փեսան

էր և ամենատաղանդաւոր զօրավարներից մինը Վարդանանց արշաւանքում: Արծրունիք, որոնց քոյրը Վարդանի եղբայր հմայեակի կինն էր, նոյնպէս մասնակից էին պատերազմին, ուր Ներշապուհ Արծրունին Վարդանանց չորս բաժանուած զնդերից առաջինը ստացաւ զօրավարելու¹⁾:

Բացի այս իշխաններից մի ուրիշ անձ էլ կար, Մեսրոպի և Սահակի աշակերտներից մինը, որ այնքան երեւելի տեղ է գրաւել Վարդանանց գործում: Սյդ Ղևոնդ երէցն էր «միշտ անտրտում և զուարթերես», որ իւր համոզմունքի պնդութեամբ և հետտորական ահագին քանքարով ամէնի սրտում ներշնչում էր ողևորություն և ինքն էլ քաջ զօրավարի պէս առաջնորդում հոգևորական խմբին²⁾: Եթէ այս իրողությունների վերայ աւելացնենք և դարի կրօնական ուղղությունը, որ հաւատացողի յոյժերին մի գերբնական թռիչք է տալիս ու ծայրայեղ լարողություն, միանգամայն կ'պարզուի Վարդանանց վաթսուն և վեց հազար զօրքի յարձակումը Պարսից բանակի դէմ, որ հնգուպատիկ աւելի էր նրանցից:

Ահա տղա են Մեսրոպեան - Սահակեան աշակերտները, իսկ, յայտնի է, որ մեծ ուսուցիչների աշակերտ-

ւիր Արշարունի, գոչէր առիւծաբար և յարձակէր վարազարար» (Եղեշէ):

¹⁾ «Զգունդն առաջին տայր (Վարդան) 'ի ձեռն իշխանին Արծրունեաց» (Եղեշէ):

²⁾ Ղևոնդեանց յայտնի խումբը, գործելով և մշակելով ժողովրդի հետ և ժողովրդի համար, բացարձակ որոշվում են այն հոգևորականներից, որոնք աւելի մեռնելուն են ծառայում, քան թէ կենդանի մարդերին:

¹⁾ «Յայտմ տեղուջ դէտ ակն 'ի վեր ամբառնայր Արշա-

ներք իրանք էլ շատ անգամ մեծ են հանգիստանում,
երբ հետևում են նրանց գեղեցիկ օրինակին: Թէպէտ,
արդարեւ, այդ աշակերտների պայծառ հոսանքի մէջ
մի քանի սեւ կաթիլներ էլ ընկան, բայց զրանք չեն
կարող խանգարել գործի ներդաշնակութիւնը, որով-
հետեւ այն կաթիլներից մինն էլ ընկաւ Քրիստոսի
աշակերտների մէջ, իսկ Զատառնը հաւատարիմ մնաց
իւր Ուսուցչին, որի սկսած գործը ստացաւ համաշ-
խարհային նշանակութիւն, ինչպէս և Վարդանան-
ցը, — համահայկական:

XII.

Թողնենք այդ տեսակ մոլորուած ոչխարներին,
որոնց մասին Ղևոնդ երէցն էլ ասում է. «Եղկելիս
և ողորմելիս քան զամենայն մարդիկ համարեսցուք
զնոսա», և տեսնենք թէ այն քաղաքական իրարան-
ցումի ժամանակ ինչ էր անում հայ կինը և մանա-
ւանդ հայ տիկինը: Ասում ենք մանաւանդ հայ տի-
կինը, որովհետեւ հասարակ կինը կամ գեղջկուհին
առանց այն էլ սովոր է չարքաշ կեանքին. առանց
այն էլ նրա բոլոր կեանքը պատերազմ է զրկանք-
ների հետ: Ուրեմն, զարմանալի չէ, որ նա յօտոցով
կամ մանգաղով կ'ըծոցներ անգլամ թշնամու զլու-
խը, եթէ սա յանդգնէր նրա տուն ու տեղին ձեռք
տալ: Բայց զարմանալին այն է, որ փափկասուն հայ
տիկինն էլ, արքայավայել յարմարանքից հրաժար-
ուելով, այժմ ոչ մի բանով չէր ջոկվում իւր
գեղջկուհի քրոջից: Նա էլ ենթարկուեց փոփոխական
բախտի վշտերին. նա էլ մեծ հանդիսացաւ հայրե-

նիքի առաջ և սուրը ձեռին¹⁾ պաշտպանեց նրա
աղատութիւնը:

Սրանց մասին եմ զրել ես մի ժամանակ.

«Քաղցրաձայն բամբիռն մի ձեռն առնելով,
Զինավառուցին հայոց աղջիկներ,
Եւ, մատաղ կուրծքը խաչակնքելով,
Պատերազմական հնչեցին տաղեր:»

Եւ կամ այն, որ ասել ենք Իտալուհի աղջկայ մասին.

«Որպէս տան մէջ, նոյնպէս կուում
Կանգնած են հեղ և հպարտ.
Գնդակներին կուրծք են ուղղում, —
Եւ շրթունքից չէ՛ գնում վարդ:»²⁾

Բայց մեր նկարած դարում հայ տիկնանց գլխա-
ւոր հոգըր երեսաների դաստիարակութիւնն է եղել, —
այն, որ շատ բնական է կանանց սեռին — մօքուր
զգայումներով և քնքուշ սիրով զարգացնել վե-

1) «Մոռացան զկանացի տկարութիւն և եղեն արուք
առաքինիք 'ի հոգեւոր պատերազմին. ...Սուր ընդ մէջ և
վահան 'ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց
առնականաց»: (Եղիշէ):

2) Այս տողերը, որ ես, համարեա, քառասուն տարի ա-
ռաջ եմ գրել, այժմ էլ նոյն թարմութեամբ և նոյն զգա-
ցումով կրկնում եմ այստեղ մեր այն պատուական կանանց
յիշատակի համար. Որովհետեւ, «Լեոնի Վիշոր» սպառուած
լինելով, դժուար է այդ ոտանաւորների օրինակը գտնել,
եւ անհամեստաբար թոյլ եմ տալիս ինձ «Յիշողութիւն-
ներիս» վերջում վերատպել երկու ևս ոտանաւորը, յա-
տուկ մեր այժմեան «փափկասուն» տիկնանց ուշադրութիւնը
հրաւիրելու:

րաճող սերունդը: Նոքա մայրենի կաթով էին մեծացնում երեխաներին և տալիս ազգին առողջ և հարազատ զաւակներ, որովհետեւ մօր կաթի մէջ Ֆիզիոլոգիական ու հոգեբանական հիւթ կայ, այսպէս ասել, մի սիրտխառն, ազգախառն յատկութիւն, — այն, որ մեր «Ճամկանիւր» ու «Նեանկանիւր» փչացնում են և պատրաստում միայն նիհար և անզոյն սերունդ: Այն հին ժամանակներում մեր օրերի դպրոցը չլինելով մանուկների առաջին դպրոցը ինքը մայրն է եղել:

Ինչպէս երեւում է, դրադիտութիւնը ուրիշ գիտութիւնների հետ միասին բաւական տարածուած էր Վարդանանց շրջանում: Ահա թէ ինչ է ասում այն շրջանի պատմադիր, Ղազար Փարպեցին. — «Բանդարկուած Նախարարների կանայքը, չնայած իրանց տառապանքներին, մեծ հոգացողութեամբ ուսում էին տալիս երեխաներին և ուրիշ դաստիարակներ էլ էին հրաւիրում ուսման գործը աջողեցնելու համար: Նրանք անփոյթ և անպիտան կանանց նման չէին, այլ առաքինի և խոհական տղամարդերի պէս խնամք էին տանում, որ նոր սերունդը լիամասն կրթութիւն ստանայ, — այնքան օգտակար նրանց համար ապագայում»: Նոյն պատմադիրը, կրթուած կանանց մասին խօսելով, ասում է. «...Մանաւանդ Վարդանի եղբորորդի Հմայեկի կինը անուանի կին եղաւ և իւր մտաւոր ընդունակութիւններով գերազանցեց հայաստանի բոլոր կանանցից և լաւ կրթեց ու դաստիարակեց իւր զաւակներին»: Այդ զաւակներից մինն էր և Վահան Մամիկոնեան, որ հանձարեղ և հեռատես զօրավար է հռչակված մեր պատմութեան մէջ:

Եւ իրաւի. այն, որ ասում ենք բարոյական սկզբունք, որպիսի են. վեհանձնութիւն, անձնագորհութիւն, կարեկցութիւն դէպի թշուառը և զանազան իրեալական ձգտումներ, թէպէտեւ դպրոցական ուղղութեան հետեանք են, բայց դրանց սաղմնառութիւնը դրած է այն սկզբնական կրթութեան մէջ, որ պիտի աւանդուի խելացի կանանց ձեռքով: Առանց կանանց մասնակցութեան, դաստիարակութեան մէջ միշտ կ'մնայ այն հատիկը, որ կարող է միայն մարդկութեան ընծայել քարթու սրտեր ու հսական հակումներ:

XIII.

Մեր ամենօրեայ դիտողութիւններն էլ նոյն բանն են վկայում: մարդիկ, որոնք զուրկ են հոգեւոր կրթութիւնից, ուր կ'ինն էլ կրաւորական դեր է խաղում կամ ոչ մի դեր չի խաղում, չի կարելի ասել, որ բարքով շատ էլ համակրելի լինէին: Հասարակաց հարցերում նրանք անտարբեր են և սառնասիրտ. սէր և բարեկամութիւն միջոյններ են և ոչ նպատակ: Առհասարակ այն մարդիկը ուղիղ ճանապարհ չեն ճանաչում, այլ միշտ մոլորապտոյտ և խոտորնակ են գնում:

Այստեղ ես պիտի կանգ առնեմ մի հանգամանքի պատճառով, որպէս զի կարողանամ ասածս աւելի պարզելու, թէեւ մի փոքր շեղուէի հետեակցութեան ուղից:

Զարմանալի երեւոյթ! Որքան հասարակութիւնը հարուստ է այդ տեսակ անհատներով և մանաւանդ հետն էլ հաւաքական Ֆիզիքական ոյժ ունի, այնքան էլ նրա բարոյական արատները անցնում են

սահմանից: Բռուկացիները, թաւուտ անտառի պէս կախ ընկած տեղը նստածի ու տեղից շարժուողի գլխին, ամէնին էլ սպառնում են ջարդ ու վիշուր անել: Մարդատեղութեան հոսանքը, որ առաջ սեպհական է եղել վայրենի և նախագոյ ցեղերին, այժմ այն ազգի մեծամասնութեան միտքն է գրաւում:

Յայտնի բան է, որ բարքերի այս աղաւաղումը, բայցի վերը յիշածից, ուրիշ սօցիալական պատճառներ էլ ունի, բայց գլխաւորաբար պէտք է վերագրել թանձրամած տգիտութեան, որի բանալին դպրոցի ձեռին է և որը կարող էր բանալ նրա դռները և գիտութեան հիւթով սրսկել: Դժբախտաբար, յայտնի է բոլորիս դպրոցական սխառմի անկրթականութիւնը, նրա մեռած ֆօրմալիզմը, ծրագրների բաբելոնեան խառնակութիւնը, ուր աշակերտը ուսանում է ամէն բան, միայն չի ուսանում այն, որ տանէր նրան դէպի կեանքը և կատարելութիւն: Ես հասկանում եմ, որ ուսանողի թերութիւնները ամբողջապէս վերագրել դպրոցին իրաւացի չէ:—Շատ անյաջող ընտանեկան և հասարակական առիթներ էլ կան, որոնց շնորհիւ մանուկ սերունդը, դեռ տղա-յութեան հասակում խարտուղակի պէս կերպարանափոխուելով, չի զարգանում, ինչպէս մի ազատ էակ: Բայց մենք մեր թուուցիկ «Յիշողութիւններով» միայն դպրոցն ենք առնում, որպէս մի որոշ մանկավարժական ճանապարհ և տեսնում ենք, որ այդ ճանապարհը այնքան էլ հարթ չէ և շատ անգամ ներհակ մանկական հոգեբանութեան:

Մենք այստեղ շեշտենք դպրոցական կեանքի երկու էական պակասութիւնների վերայ, որ միշտ անջնջելի

հետք են թողնում ուսանող սերնդի մէջ:—Սյդ ճրցանալ — պատիժն է, — մէկը լաւին, միւսը վատին, որով պեղագօգը մտածում է մէկով քաջալերել և միւսով ծուլութեան առաջը առնել, բայց նա երկու կողմովն էլ մեղանշում է: Հանդիսաւոր պարզեաբաշխութիւնը, որ դպրանոցի անխուսափելի չարիքն է, հէնց սկզբից աշակերտի մէջ ցանում է մեծամտութեան սերմը, այլ և գերազանցութեան զգացում ընկերի առաջ, որով և խանգարվում է ցանկալի ներգաշնակութիւնը դասարանի մէջ: Իսկ պատիժը, աշակերտի ինքնասիրութեան պատուին դիպչելով, այնուհետեւ հարուածում է նրա հոգեկան ոյժերը և անընդունակ կայնում նրան ապագայ առաջադիմութեան համար: Մեզ կ'պատասխանեն, որ այս իդէալիստի ցնորք է. այնու ամենայնիւ մենք մտածում ենք, որ աւելի նպաստաւոր կ'լինէր գործին, եթէ ուսուցիչը, հոգեպէս հաղորդուելով աշակերտների հետ, նրանց մէջ շարժէր բանասիրական աստիճակ, որով միապէս խրախուսած կ'լինէր և լաւին, և վատին, այն էլ առանց մրցանակի ու պատժի: Յամենայն դէպս եթէ մանկավարժի պատիժը, ինչպէս մի զգաստացուցիչ միջոց, երբեմն անհրաժեշտ է համարվում, այդ ոչ մի կերպ չպիտի լինի կերակրի կամ ճաշի զրկանքով, որ մարդուս մտաւոր կեանքի գլխաւոր սնունդն է¹⁾:

Աւելորդ եմ համարում խօսել այստեղ և այն տիպի դպրանոցների մասին, որ իրանց սաների գլու-

¹⁾ Մի երեւելի ֆիզիոլոգ ասում է. «Մարդս է այն, ինչ որ ուտում է». այսինքն, մարդս իւր կերածն է:

խը լընում են նախաջրհեղեղեան նիւթերով, որոնք յետոյ զրաւելով արդիւնաւէտ տեղեր, դափնի ծառերով շրջապատած, ընկնում են մի ինքնաբաւական անդոյութեան մէջ:

Ահա և այսօրուայ ուսանողը, քանի որ համալսարանումն է, ազատամտութեամբ զարմանալի վերաթուիչ է երեւում. նա մինչև անգամ երկինքը ևս կամենում է մատով ծակել, որ այն կողմն էլ համալսարանական լոյս սփռի, բայց էգուց, քաղաքացի դառնալով, ամենևին ուրիշ երգ է երգում, որովհետև նա ոչ մի սկզբունք չի սեպհականել դպրոցից: Սյս պատճառով մեր քաղաքացին մեծագործութեան մէջ միայն մեծամիտ է. նա ամէն օր եղբայրասիրութեան մասին է մտածում, բայց ամէն օր էլ, հոգմովար ամպի պէս զրգռւելով, մի երկու կաթիլ անձրև էլ չի ցողում եղբայրական արտի վերայ, որ արդէն ծածկուած է եսամոլութեան պատատուկներով!

Սյս տխուր նկարագիրը մէջ բերելով, որ մեր հասարակական ու դպրոցական կեանքի հետեանքն է, մենք սրանով չենք ուզում ասել, որ մի այդ տեսակ աշխարհում չկայ առաջադիմութիւն: Ընդհակառակն, շատերն էլ իրանց առանձին ընդունակութիւնների շնորհիւ, այսօր սաստիկ պատերազմն են մղում մեծամասնութեան խաւերի դէմ և եղբայրաբար ձեռ մեկնում ամենին, որ ազգից և որ կրօնից էլ լինէին նոքա: Ահա և այդ ընտիր դործիչների ուղեցոյցը. Ազգային պարծանք համարել միայն լուսաւոր և գիտակից համեստութիւնը և առանց հայրենասիրական պարկապղուկի սպասաւորել հասարակաց պիտոյքներին: Միայն սէր տածել զէպի մարդ-

կութիւնը, ազնիւ անձնայարգութեամբ սովորելով ուրիշին էլ յարգել:—Չարհամարհել ամբօխը, ինչպէս մի ստորին արարած, այլ կարեկցաբար նպաստել նրա մտաւորական և անտեսական զարգացման, որ նրա «պաշտ» — ծաղը չըլլի: Արդարը և իրաւը անկողմնապահութեամբ պաշտել: Մաքսաւորի հետ նստել ու վեր կենալ միայն նրան բարոյապէս բարձրացնելու նպատակով և ոչ նրա տղմի մէջ խրուելու:

Քաղցր է ինձ այստեղ փոխադարձօրէն ողջունել այդ ազնիւ շրջանը և ծափահարել նրա զաւոյ յաղթանակին!

Ահա ես վերջացրի իմ «Յիշողութիւնները», որոնցից կարելի է տեսնել, որ Պարսիկները յաղթեցին Վարդանանց, բայց, ինչպէս ասել ենք, չկարողացան նրանց նուաճել, այսինքն լեզուն ու կրօնը ջնջել:

Որովհետև հայոց կանայքն էլ նպաստեցին այդ բարոյական յաղթութեան ոչ միայն նիւթական զրկանքներով, այլ և իրանց Կաստիարակութեան հանձարով, այս պատճառով ես զիմում եմ մեր հայուհի ընթերցողներին և ասում նրանց. Միակ զէնքը, որ մենք այսուհետև պիտի դործ դնենք վտանգաւոր հոսանքների դէմ,—այդ մանուկների Կաստիարակութիւնն է, որ նոյն իսկ բնութիւնից յանձնուած է ձեր մայրական խնամքին: Թող, ուրեմն, մեր կանայք ու տիկնայքն էլ իմանան, որ իրանց թանկագին քարերից ամենաթանկագինը է այն, որ նրանք լաւ մարդիկ պատրաստեն ազգի համար:

ԻՏԱԼՈՒՀԻՔ ԵՒ ԻՏԱԼԱՅԻՔ

(Յիշողութիւն ղէպի անցածը)

I.

Ինչո՞ւ, ինչո՞ւ, Իտալացիք
Ձէ թնդում քաղցր երգեհոն,
Ինչո՞ւ, քնքուշ Իտալուհիք,
Թողել էք ձեր պիանօն:
Մոռացել են դոբա, ասես,
Փափուկ սեռը կանացի.
Սրտում վրէժ, կարիճի պէս
Դիմում են վրանը ոսոխի:
Որպէս տան մէջ, նոյնպէս կռուում
Կանգնած են հեղ և հպարտ,
Գնդակներին կուրծքն են ուղղում,
Եւ շրթունքից չէ՛ գնում վարդ:

II.

Ջարմանում էք, ինչ ասում եմ:
Թէ դուք նոյա տեսնէիք
Խաղաղ օրով, երբ քաղցրագէմ
Բռնած կիթառն զեղեցիկ,

Փափուկ մատներն արծաթէլար
Նուագարանին ղէպէլով,
Պարտէզի մէջ ծաղկազար, —
Դուք կ'լսէիք անխռով
Սիրոյ ձայնը, սիրոյ հողին,
Հիւսած սրտի թելերից.
Սիրե՛լ գիտէ Իտալուհին,
Զրկուած բոլոր աշխարհից:

III.

Շուրջ ձակատով շուշանագեղ
Ծածանվում են թուխ մազեր,
Սև սաթի պէս յօնքեր շքեղ,
Վառ աստղի պէս ջուխտ աչեր:
Դուք լսեցէ՛ք, երբ զրուցում են.
Ամբողջ զրախտ փափկութեան
Ձեր սրտերը կախարդում են
Որպէս տաւիղն էօլեան:
Եւ ոսոխի դուռը հողին
Մի՞թէ չ'պէտք է նուաճուի,
Եւ յաղթութեան արմաւենին
Դոյա առջև տարածուի:

IV.

Իտալուհիք, և ձեզ նման
Արեւելքում մի անգամ,
Ձեր քոյրերը զինուորուհեան
Թշնամու դէմ անզգամ:

Արեան գնով չայաստանին
Գնեցին նոքա փրկութիւն,
Եւ թաղեցին հողի ծոցին
Անմեղ ծաղկած կուսութիւն:
Մեռան նոքա, բայց կ'մեռնի՞
Նոցա գործի յաղթանակ.
Դուք պէ՛տի գաշա. մենք կենդանի
Ունինք նոցա յիշատակ:

V.

Իտալիա, աշխարհ փառքի,
Դու, քո կուրծքը զրահով
Ամրապնդած, յաղթանակի
Կամիս պսակուել զափնիքով:
Մի՞թէ իսպառ պէտք է ճնշվի
Սյդ ազգային զօրութիւն,
Եւ առուի պէս արիւն թափուի,
Հերոսներից սուրբ արիւն:
Մի՞թէ ձեռներն, մի՞թէ սրեր
Քո ոխերիմ թշնամու.
Պէտք է բերեն քիզ նոր աւեր,
Եւ սարկանաս զարձեալ դու:

VI.

Ինձ ասացէ՛ք. ո՞վ ձեզանից,
Որի մէջ մարդու սիրտ կայ,
Զ'խեղդուելով արտասուքից,
Կարող է մնալ անզգայ,

Տեսանելով այս ողբալի
Սրածութեան աւերած,
Եւ սրբութիւնն Իտալիայի
Նշաւակով անարգած:
Անիծում եմ չար ժամանակ,
Երբ Բուրբօնը զիշատիչ
Տնկեց այստեղ իւր զրօշակ
Եւ խաբեբայ և մատնի՛չ:

VII.

Մի կամք, մի շնչ ձեզ օգնական,
Առէ՛ք սուսեր — և յառաջ.
Դուք սիրտ ունիք ասպետական,
Յարձակուեցէ՛ք ձախ ու աջ:
Ազնիւ գործին ինքը Աստուած
Ուղարկում է իւր վահան.
Իտալիա, փառք անմոռաց.
Կ'թնդայ ձայնը փրկութեան:
Նորից, նորից անուշահոտ
Կ'արձակուի քո մրտենին,
Նոր արշալոյս, նոր առաւօտ,
Եւ աւետանց ձիթենին:

VIII.

Եւ անցածիդ ղեղեցկութիւն
Իւր զազաղեց կ'ղարթնի,
Միայն աւեր և պղծութիւն
Աւստրիան կընդունի:

Իտալիա՛, դու զօրաւոր,—
 Եւ կեցցե՛ն քո զաւակներ.
 Իտալիա՛, ես հոգեւոր
 Բերում եմ քեզ իմ տաղեր.
 Եւ հայի մէջ կայ կենդանի
 Աղատութեան արձագանդ.
 Եւ թող չասեն, որ հայն չունի
 Ո՛չ աղատ կամք և ո՛չ կեանք¹⁾:

1864 թուին.

Քաղցրաձայն բամբիւռն մի ձեռն տանելով,
 Զինավառեցան հայոց աղջիկներ,
 Եւ, մատաղ կուրծքը խաչակնքելով,
 Պատերազմական հնչեցին տաղեր:

Կին էին ծընել, բայց երբ հայ աղկին
 Աւեր ուղարկեց Պարսիկն այն գոռող¹⁾.—
 «Կորուստ», գոռացին և, սուրը ձեռին,
 Հեծան հրիվար ինչպէս մի հերոս:

Սուրբ առաքաստը մոռացան նորա
 Եւ չյիշեցին խնջոյքն հարսնութեան.
 «Ազգ ու հայրենիք» շրթունքի վերայ
 Փռուեցին զաշտում,—ո՛վ մեծ քաջութեան:

Դափնիք անթառամ թող ձեզ պսակեն.
 Թող ձեր ոսկորներ ջերմ արտասուքով
 Հայրենասիրի աչքերը թացեն.—
 Խաղաղութի՛ւն ձեզ սուրբ սաղմոսներով:

Դուք ձեզ զոհեցիք հայի պարծանքին.
 Բայց ձեր քոյրե՞րը. — ո՛հ, արտասուքից
 Խեղդվում է ձայնս.—անպէտք են աղղին...
 Յանդիմանեցէք նրանց շերիմից²⁾:

1865 թուին.

¹⁾ Յազկերտ երկրորդ.

²⁾ Արտատպած «Լեռնի Վիշտ» գրքից. էջ 85.

Տ ա ղ ա ծ է.

էջ 6 իրաւաստութիւնից
20 Տրապիզոն
29 ասեղի

Կ ա ղ ղ ա.

իրաւագիտութիւնից
Տրապիզոն
ասեղ

ՀՀ Ազգային գրադարան



NL1711190

ՀՀ Ազգային գրադարան



NL1711191

ՀՀ Ազգային գրադարան



NL1711192

